

Արմեն

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՈՆԱԿԱԼ - ԳՐԱԿԱԼ - ԲԱԼԱԿՐՈՎԱԼ

ՊԱՌԱՆԱԿԱՆ ՀՐԱՄԱԿԱԿՈՒՅԹ ԵՐԱԽՈՎԵՐԻ ՀԱՅ ՊԱՐԻԿՈՐՈՔԵՐԻ



ՅԱԿԵՑ ԱՇԽԱՏՈՎ,
Ա. ԱՓառաս ԽԱՐԵԿԱՄՆ ՈՒ ԽՈՐՈՋԵ
ՀԱՆԳՈՒՑԵԱԼ, ԳՈԼՈՒՑ Ա. ԿԻՒՊԵՆԿԵՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ


— Ման Ա. Արուսոյ Բարեւար Գալուստ Ա. Կիւլպէնկեանի	211
Կիւլպէնկեանի	ԱՐԾՈՒ ԱԼՓՈՅԱՃԵԱՆ
Յարգանի Տուրք մը՝ Հանգուցեալ Գ. Ա. Կիւլպէնկեանին	215
Անմոռանալի Ցիառակ	222
	ՏՐԻԱԾ ԵՊՍ. ՊԱԼԵԱՆ
	223
ԲԱՆԱՍԵԳՆԱԿԱՆ	
— Լեմանի ափին	ԵԳԻՎԱՐԴ.
— Երկու առուն	ՎԱՀՐԱՄ ՄԱՎԵԱՆ
	225
	226
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ	
— Աւաշրալիոյ Հայ կեանքը	Ա.ԱՊ.ԻԿ. Ռ. Վ.Ր.Ի.
— Տպաւորութիւններ Հնդկաստանին	ԲԱԲԴԵՆ Վ.Ր.Ի.
Հանգիս՝ Գեր. Տ. Ռուբեն Արեապ. Մանուսանի	227
	230
	236
Ա. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԻՆ	
— Սկեղեցականի - Բեմականի	238
— Պատօնականի	238
Հանիկ Հայկ Զազըր	ԱՐԾՈՒ ԱԼՓՈՅԱՃԵԱՆ
	239
ՏիրՈՒԻՆԻ	
— Ուրարտիկ Արամ Սկրայստեան	235

**ՍԻՈՆ-Ի Տարեկան բաժնեգինն է՝
բոլոր Երկիրներու համար՝ Ա.նզլ. Շիլին 20**

*Redaction of the Armenian Monthly SION
Armenian Patriarchate,
P. O. B. 4001
Old City - Jerusalem
Via Amman (Jordan)*

تصدرها - بطريركية الارمن الارثوذكس المدير والمحرر المسؤول - الآب هايكازون أبراهميان
طبع في مطبعة دير الارمن - القدس تعلیم العدد ٨ أغسطس ١٩٥٥

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Father Haigazoun Abrahamian. Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.



ՅՈՒԼԻՑ ԱԳՐԱՑԵՍԻ

Ա. ԱԹԱՋԵՍ ԽՈՐԵՎՈՒՆ ՈՒ ԽՈՐԵՎՈՒՆ

ՀՈՎՈՒՑԵՍՈՒ ԳՈԼՈՎՈՏ Ո. ԿԲԵԼՊԵՆՔԵՍ

—= ՍԻՐՈ =

ԽԹ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇԲՁԱՆ

1955

ՀՅՈՒՍՏՈՒ

ԹԻՒ 8

ԽՄԲԱԳՐԸԿԱՆ

ՄԱՀ

Ս. ԱԹՈՌՈՅ ԲԱՐԵՐԱՐ ԳԱԼՈՒՍ Ս. ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆԻ



Մեծանուն հայը, որուն կորուստին մտածումը ունինք ազգովին, աղնատեսական աշխարհի ամենէն հզօր և համբաւեալ անձնաւորութիւններէն մին հանդիսացաւ մեր դարու ոկզբնաւորութեան, միջազգային չափանիշով։

Մեծ եղաւ ան իր ծագումով, իր կեանքով և մանաւանդ իր թողուցած հարստութեան արդիւնքով։ Մազումով, որովհետեւ տոհմիկ շառաւիզն էր հաւանաբար Աշտունեաց Վարդ-Պատրիկ իշխանական լուսնին, որուն նախնիք ները Տօսպեան խրոխտ բարձունքներէն փոխադրուած կապագովիիոյ վաճառան վայրերը, կեսարիոյ և Կ. Պոլսոյ առեւտրական հրապարակներուն վրայ, շահ վայրերը, կեսարիոյ և Կ. Պոլսոյ առեւտրական հրապարակներուն վրայ, ժամանակի ընթացքին, փայլեցան իրենց ցեղային ու տոհմային ձիրքերով։

Կեանքով, որովհետեւ իրական մեծութիւնը անհատական ճիզերու արդիւնքով է միայն պայմանաւոր, ինչպէս այնքան յատկանշականորեն կը հասդիւնքով հանգուցեալի պարողային։ Տաղանդն ու դաստիարակութիւնը առանց տատուի հանգուցեալի պարողային։ Տաղանդն ու դաստիարակութիւնը առանց տքնաշան աշխատանքի, շատ յաճախ անարդասիք կը մնան, մանաւանդ մեր օրերու կեանքին մէջ։

Գործով, որովհետեւ ո՞վ չի զիտեր այսօր զինքը, Գալուստ կիւլպէնկ-եան, որուն կեանքը չքեզ տեսարան մը և վերելք մը եղաւ միանդամայն, եան, որուն կեանքը չքեզ տեսարան մը և վերելք մը եղաւ միանդամայն, խորտակելով կարելի բոլոր մրցանիշները, որոնք անձ մը բացառիկ ու փառաւոր զիտեն ընել։ Բան մը ըլլալու, բարձունքի մը համելու իզձը առանձովար զամենէն հզօր կիրքը եղաւ իր հետապնդումներուն։ Ուրիշներ, հարուստի զամենէն հզօր կիրքը եղաւ իր հետապնդումներուն։ Ուրիշներ, հարուստի զամենէն հզօր կայելքի մէջ զուցէ փնտուէին կեանքի իրենց նպատակը, ինքը աշխատանքի մէջ զիտցաւ որոնել զայն և շնորհիւ իր ճիզերուն կրցաւ հասնիլ միշտատանքի մէջ զիտցաւ որոնել զայն և շնորհիւ իր ճիզերուն կրցաւ հասնիլ միշտատանքի մէջ զիտցաւ որոնել զայն և համբաւիւ։

Ահա թէ ինչու Յուլիս 20ին Լիզպոնի իր բնակարանին մէջ մեսնող այս տաղանդաշատ հայը, 86 տարիներու բարւոք ծերութեամբ հասուն, իր պատ-

ուական տաճմին ամենէն ուշադրու մեծութիւնը եղաւ, տարիներով իր վրայ կերպոնացնելով աշխարհի հզօրներուն նայուածքները, որոնք կանգ տռնել դիւնեն միայն ցցուն բարձունքներու վրայ:

Հանգուցեալի յաջողութեան և մեծութեան գաղանիքները բազմերես էին և ուշադրու: Իր նկարազրին ամենէն ցայտաւն զիծն էր անտարակայս լիմասուրինը, աւելի զործնական առումով ողջմութիւնը, ինչպէս նաև նեռանեսուրինը, երկու թանկազին յատկութիւններ, որոնց երջանիկ և սերա զործակցութեանը չնորհիւ, ներկան ու ամրագան, այսինքն զործն ու անոր յաջող արդիւնքը զիրար կը լրացնեն: Իր իմաստութեան և հեռատեսութեան չնորհիւն էր անշուշտ որ կէս դար առաջ անիկա պիտի զիտնար զնահատել քարիւղի, այդ զարշահոտ և մածուցիկ նիւթին արժէքը ճարտարարուեստի մէջ, և շահազրպաել ոչ միայն անհատներ այլ նաև պետութիւններ անոր ունենալիք դերին նկատմամբ:

Այդ շահազրպաստութիւնը իր երիտասարդ տորիներուն սկսած, զինք պիտի առաջնորդէր կովկաս և մանաւանդ Պաղու, մօտէն տեղեկանալու քարիւղի ողտագործման և դերին: Ժամանակ մը Մանթաշէֆի անօրէնութեան մօտ աշխատելէ յետոյ, պիտի զործէր իր հաշույն, հետզհետէ կարեւոր տեղ մը զրաւելու քարիւղի տնտեսութեան մէջ: Արդիւնաբերութեան այս մարզին մէջ անիկա ուշադրու դարձաւ 1899ին Լոնտանի մէջ, երբ զործակից եղաւ Ռօյլ Տրքարիւղի ընկերութեան հիմնադիրներէն Արք Ֆերդինանդի, անոր սկզբնական օրերուն: Կիւլովէնկեան անոր հմուտ խորհրդատուն եղաւ, և օգնեց իրեն զլուխ հանելու Ռուջիւտի հետ ձեռնարկած իր զործը:

Փարիզի մէջ վարեց այն բոլոր բանակցութիւնները որոնք կատարուեցան Շէլի կողմէն, զնելու համար Ռուջիւտի կովկասեան ձեռնարկները: Թէ է կովկասը կիւլովէնկեանի զործունէութեան կեդրոնը մնաց, սակայն ինքը նախազգալով Մուսուլի քարիւղի հանքերուն վերապահուած ապազան, ջանաց իր դերն ու տեղը ունենալ, առաջին Մեծ պատերազմէն ամիսներ առաջ, Անդիոյ և Թիւրքիոյ միջև եղած բանակցութիւններուն ընթացքին: Իր աշխատանքները բարձրօրէն զնահատուեցան Անդիոյ մէջ և Տէթէրաբինկն ու անզիփական կառավարութիւնը ստիպուեցան իրեն թողուլ ի վերջոյ թրքական քարիւղի ընկերութիւններու արժեթուղթերու հինգ առ հարիւրը: Ասկէ կը սկսի իր մասնակցութիւնը Մուսուլի քարիւղի զործերուն, որ յետոյ անոր պիտի վերապահէր կաշեւոր իրաւարարի և բաժնեկցի գերակատարութիւն մը՝ Անդիոյ, Ամերիկայի և Ֆրանսայի միջև եղած քարիւղի վէճերուն և իրաւասութեան պաշտպանութեանց ընթացքին:

Քարիւղի արդիւնաբերութեան մէջ ցոյց տուած իր տաղանդն ու ձեռներէցութիւնը մէկ երեսն է միայն իր զործի մարդու հանճարին: Անիկա եղած է նաև տնտեսական խոշոր զործառնութիւններու միջնորդ և ճշմարիտ ձեռնարկու մը պետութիւններու և մեծ ընկերութիւններու, շահելով անոնց հիացումն ու հակառակութիւնը փոխն ի փոխ, հայու անպարտելի ուազմավարութեամբ: Այդ է պատճառը որ օտարները զինքը կոչած են քարիւղի արդիւնա-

բերութեան իշխան, առեւտուրի թալիջրան, վերազդումներ՝ որոնք շատ բան կ'ըսեն միջազգային առեւտրական հրապարակի այս անպարտելի տիտանի մասին:

Հանգուցեալլ յայտնի մասնագիւա մըն էր նոյնպէս պարսկական զորգերու, հնագիտական առարկաներու, միջնադարեան ձեռագիւներու, արձաններու, և մեծ սիրահար մը թանկարժէք նկարներու։ Արուեստի այդ զույս զործոցներու իր հաւաքածոն նախանձը կրնայ շարժել նոյնիսկ պետութիւններու, որոնց հետ մրցումի մէջ էր, զանոնք իւրացնելու իր հետաքրքրութեամբ։

Հայը ինչպէս անցեալի, այնպէս ալ մեր օրերուն, պարծանքով յիշած է ուրիշ մեծութիւններու կարգին իր հարուստ նուիրատունները: Մեր ժողովուրդը շատ բան կը պարտի բախտէն նպաստաւորուած իր այդ զաւտիներուն և իրողութիւն է թէ ինչ որ մենք ունեցած ենք անցեալի մէջ և ունինք այսօր իրրե ազգային կայը և հարստութիւն, նուէրներ են մեծաւ մասամբ անոնց որոնք զիտցած են միշտ յարդարել մեր իմացական և հոգեկան անդաստանները իրենց իշխանական նուիրատուութիւններով: Եթէ Նկատի ունենանք մեր աղջային կեանքի այս վերջին հարիւրամեալլ միայն, Գէորգեան, Ներսէսեան, Լազարեան, Սանտասարեան, Մելքոնեան, Կիւլպէնկեան, Նուզարեան և Եղիացեան անուններով ծանօթ փառաւոր յիշատակարանները, մատնանշած կ'ըլլանք այս իրողութիւնը:

Քառասուն տարիներէ ի վեր հայ սփիռքը մեծ տէնկալութիւններով կը
նայէր քանքարաւոր այս հակային, անկէ սպասելով կարելի օժանդակութիւնը իր
կրօնական, կրթական ու ուրիշ կարիքներուն ի նպաստ։ Հանգուցեալի կենդա-
նութեան, էջմիածին, Երուսաղէմ, Պոլսոյ Ս. Փրկչի հիւանդանոցը, իր ձեռա-
կերտ Լուստոնի Ս. Սարգիս Եկեղեցին և Թրիփոլիի հայ համայնքը բարերարուե-
ցան իրմէ։ Իրքի հաւատարիմ զաւակը Հայ Եկեղեցւոյ ան չթերացաւ իր այս
պարտականութեանը մէջ, ամէն անգամ որ գիմում եղաւ իրեն լուսաւոր պա-
հելու անոր խորանին կանթեղը։ Չմոռցաւ Ս. էջմիածինը, որուն տաճարին վե-
րանորոգիչը հանդիսանալ ուզեց, չմոռցաւ Երուսաղէմի մեր Սուրբ Աթոռը,
բանորոգիչը հանդիսանալ ուզեց, չմոռցաւ Երուսաղէմի մեր Սուրբ Աթոռը,
սատարելով միշտ անոր կրօնական և մանաւանդ կրթական կարիքներուն։ Այս
կարգի իշխանական նույիրատուութիւն մըն է Ս. Աթոռոյս Կիւլպէնիկեան Մա-
տենակարանը, շինուած ի յիշատակ բարերարի երջանիկ ծնողներու, որ իր
մէջ կը տաղաւարէ քսանիխնդ տարիներէ ի վեր Ս. Յակոբեանց մայրավանքի,
կրօնքի, կրթութեան և զրականութեան զանձերը։ Աւրախ ենք հոս յայտնել
կարգանալու թէ անցնոոյ տասոը տարիներու Ընթացքին Կիւլպէնիկեան Մատենա-
կարենալու թէ անցնոոյ տասոը տարիներու Ընթացքին Կիւլպէնիկեան Մատենա-
կարենալու թէ անցնոոյ տասոը տարիներու Ընթացքին Կիւլպէնիկեան Մատենա-

Անցնող եօթը տարիներուն հանգուցեալլ յաճախ զումարսոր վրաց Անցնող եօթը տարիներուն հանգուցեալլ յաճախ զումարսոր վրաց Անցնող եօթը տարիներուն համար Պաղեստինի աղէտին հետեւանքով չքաւոր- Աթոռ, իր փափաքին համեմատ Պաղեստինի աղէտին հետեւանքով, առանց ուածներուն բաշխուելու համար, կիրթ ու ազնուական կերպերով, առանց զգացնել ուզելու իր տուածը, իրեն համար դրամը, ինչպէս կ'երեւի բախտ մը կ'ոյժ մը չէր միայն, այլ արժէք մը՝ կիրարկելու զայն արժէքներուն ի խնդիր և ոյժ մը չէր միայն, այլ արժէք մը՝ կիրարկելու զայն արժէքներուն ի խնդիր և արժեւորելու զանոնք: Ի վերջոյ բարիքը չէ որ կը մեծանէ մարդս, այլ և արժեւորելու զանոնք: Ի վերջոյ բարիքը, Հանգուցեալլ ժլատ չէ եղած մարդն է որ կը մեծանէ և կ'արժեւորէ բարիքը, Հանգուցեալլ ժլատ չէ եղած

բնաւ, երբ արժէքներու նկատմամբ իրեն յատուկ կեցուածքով մը անհրաժեշտ նկատմած է իրմէն ուզուածը, նկատի չունինք քանակը այլ արժեւորելու իր ինքնայտուկ կերպը միայն:

Հանգուցեալի մահէն յետոյ, իր հարստութեան մեծազոյն մասը վերածուած է հիմնադրամներու, ի նպաստ կրթական, զիտական և բարեսիրական ձեռնարկներու: Այս կերպով կը մշտնինաւորուի իր զործը բարձրագոյն կարիքներու ի հաշիւ, առանց ցեղի և տեղի խտրութեան: Բարերարելու այս կերպին մէջ, բարիքի բովանդակ իմաստասիրութիւն մը կայ, մեծ միտքերու միայն յատուկ: Անտարակոյս թէ ուրիշներու կարգին՝ և անոնցմէ աւելի իրաւունքով՝ հայ ժողովուրդը ևս պիտի կրնայ օգտուիլ կիւլպէնկեան հիմնադրամներու այս արդիւնքէն և բարիքէն, եթէ անոր իմաստուն տնտեսները, որոնց զգացումներուն վրայ ամէն վստահութիւն ունինք, ուզեն և զիտանան կատարելու իրենց պարագը հայ ժողովուրդին և հանգուցեալին նկատմամբ, որ զաւակն էր նախ իր ժողովուրդին:

Մեռած է հայրը, սակայն կը մնայ իր պատուական զաւակը, Վահմ. նուպար կիւլպէնկեանը, հարազատ որդին իր հօր մաքի և հողիի ժառանգութեան: բարեսիրտ, զգայուն և բարձրօրէն դաստիարակուած անձնաւորութիւն մը, Հարրոյի և Քէմպրինի բարձրագոյն կրթարաններու մէջ: Տարիներով չործակիցն ու ներկայացուցիչն է եղած ան իր հօրը, և ծանօթ անձնաւորութիւն մըն է Անզիոյ և Ֆրանսայի առեւտրական լայն շրջանակներու, ինչպէս նաև բարձր ընկերութիւններու:

Երկրորդ պատուական հայ մը և կարող անձնաւորութիւն մըն է հանգուցեալի վեսան, Տիար Գէորգ Եսայեանը, հանգուցեալի զործակիցն ու վրստահնելին, և երեքէն մին կիւլպէնկեան աւանդի և զործի զեկավարներուն: Մեծ է իր գերը անտարակոյս, նիւթացած այդ բարիքէն մեր ժողովուրդի կարիքներուն արդար բաժին մը հանելու տեսակէտէն, ինչպէս նաև մեծ է մեր վստահութիւնը երախտաշատ Եսայեան տոհմի այդ պատուական հարազատին նկատմամբ, որ իրեւ վեսայ կիւլպէնկեանի, կը կրկնապատկէ իր ժողովուրդի բարի ակնկալական անձնաւորութենէն:

Այժմ արտմագին զգացումներով երբ կը վերջացնենք Ա. Աթոռոյ հանգուցեալ բարերարին՝ Դալուստ Ա. կիւլպէնկեանի այս մահազրութիւնը, մեր միտքը կ'երթայ անոնց, իր հարազատներուն և զործի զեկավարներուն, որոնք իրմէ վերջ պատասխանատու կը մնան Աստուծոյ, հանգուցեալին և ազգին նկատմամբ, իրենց երրեակ պատասխանատութիւններուն մէջ: Տէրը թող լուսաւորէ հանգուցեալի հոգին, միփթարութիւն պարզեւելով իր երկու զաւակներուն, նուպարի և ՈՒթայի, ինչպէս նաև իր վեսին և թոռան, շարունակելու մեծութեան և բարութեան այն օրինակելի կեանքը, զոր ապրեցաւ իրենց հանգուցեալ սիրելին, իրեւ կիւլպէնկեան մեծահամբաւ և ազգանուէր տոհմին արժանաւոր հարազատը:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

ԿԻՒՂՊԵՍԿԵԱՆՔ

Կիւարական հայ ընտանիքներու մէջ կիւլպէնկեանք կը զրաւեն առաջին տեղը, ոչ թէ անոր համար որ անոնք էին ընտանիք մըն են և աւանդական ազնուականուաթեամբ մը գրոշմը ունին իրենց ետին, այլ անոր համար որ այդ մէծ ընտանիքը՝ որուն հարիւրաւոր ազգամիերը այսօր ցրուած են կիւարիայէն զուրս հետաւոր վայրեր, մօտաւորապէս երեք հարիւր տարիններու իր կիւանքին մէջ որ Արգէսոսի չուրջը ազրած է, աւեականապէս ազրիւր մը եղած է բարութեան ու բարեգործութեան, և ազգին տուած է օգտաշատ ու պատուարեր անդամներ, մասնաւորապէս առետրականներ, թէ ուրիշ ասպարեզներ ալ օտար չեն եղած այս մէծ ընտանիքին անդամներէն ոմանց:

Այս ընտանիքը ազնուական ծագումի մը աւանդութիւնը կը պահէր իր մէջ, անչ չուշտ իր նախնիքներէն աւանդարար եկած հասած մինչեւ մեր օրերը: Իրենց թշուանեաց նախարարական ընտանիքին սերունդը ըլլալու տեսութիւնը որքան որ ալ հաւասար և պատմական կոչուելու չափ զօրաւոր փաստերու վրայ հիմնուած չըլլայ, սակայն աւանդութիւն մը կրնայ նկատուիլ, և իրը այն կարելի է անոր արժէք մը տալ, որքան որ ալ անիկա առաւելութիւն մը չըներէ այդ ընտանիքին համար՝ որուն ծագումը ազնուական եթէ չըլլայ իսկ, բան մը չի կորունցներ իր արժէքէն ու համբաւէն, երբ դործերն են ազնուական:

Կիւլպէնկեան ընտանիքը, ըստ աւանդութեան մին էր այն եօթը ընտանիքներէն որոնք Պարսկաստանէն եկած էին կեսարիա և իրենցմէ ոմանք քաղաքը և ոմանք թաւլաւուած:

Կիւլպէնկեանք այս վերջիններէն են որ եկած հաստատուած են թաւաս, որուն ոչ միայն հնագոյն ընտանիքը այլ նաև ամենէն բազմաճոխը կը ներկայացնէին: Իրենց կալուածները թաւասի չուրջը շատ անդամակ էին: Ամերիկեան հաստատու-

թիւնները որոնք չինուած էին բարձրագիր դիրքի վրայ երրեմե այդին էին այս ընտանիքին, որ թաւասի չուրջը ամենահին օրերէ սկսեալ բարիքներ ըրած է:

Մասնաւորապէս թալաս իր փառքէն և համբաւէն շատ բան կը պարտի կիւլպէնկեաններու որոնք չինուած են 1848ին անոր վարդ Պատրիկեան վարժարանը և ապա 1860ին համանուն ազգիններու վարժարանը և երկար տարիններ մինչև Ընդհանուր Պատերազմ հոգացած են այդ վարժարաններու ծախքիրը: Այս ընտանիքն է որ Ս. Կարապետի վանքին նույրած է Հէօնկէլէր ջաղացքը և չընակայ ընդարձակ արտերը, գետին երկու կողմէնը 1830ական թւականներուն չինուած է Տէրէվանիքի Ս. Սարգիս վանքին վիմափոր ջրամբարը, 1870ին նորագուծ է Թոմարգայի Ս. Աստուածածին վանքը և 500 սոկի տուած՝ Զօմախլուի Ս. Խուսաւորիչ Եկեղեցին չինութեան: Եսյապէս շատ կարելոր զեր մը կատարած է Ս. Կարապետի Բարձրագոյն վարժարանին չինքին չինութեան մէջ, ինչպէս յիշուեցաւ, տալով Տրգատ Եպո, Պալեանի 1899ին Ռւսութանարաց ընկերութեան 800 սոկի զումարը որ իրենց քով կը մնար, և կատարելով Գառնիի կիւլպէնկեանի նախածեռնունութեամբ հանգանակութիւն մը, չինութիւնը լրացնելու համար: Կիւլպէնկեանք էին նաև որ 1873ի սովոր ատեն կեսարիոյ և չընակայից սովետներու օգնութեան համբար մէծ նպաստ բերին, արմտիք հասցնելով կիսարիա:

Անոնք հանդային գործերու միշտ բերած են իրենց մասնակցութիւնը և շարունակ մասնակցած են ազգային կեանքի, կատարելով շատ ազգեցիկ զեր:

Անոնց ազգեցութիւնը զերազօր եղած է նաև պետական չըլանակներու մէջ, ուր իրենցմէ ազգեցիկ անձեր, յաճախ ժողովուրդին շահերը պաշտպանած են բանիւ և գործով: Օրինակի համար 1863ին թաւասը քաղաքին կապող խճուղին չինուած է Քե-

բովքը կիւլպէնկեանի ջանքերով և ձեռնարկութեամբ, կառավարիչ Համբիտ պէշի վրայ իր ունեցած ազդեցութեան շնորհիւ։ Կիւլպէնկեանները մինչև այսօր մասնաւոր գուրգուրանք մը ցոյց կուտան կեսարիոյ խլեակներուն և անոր անունին կապուած ամէն բանի հանդէպ և Զինադադարէն յետոյ վերապրող կեսարացիներու ոգնութեան ձեռք կարկառողներուն մէջ միշտ պիտի յիշուի անունը կիւլպէնկեաններու, մասնաւորապէս վեհոզի ու պատուական և ազնուասիրտ Հայուն՝ հանգուցեալ Պատրիկ կիւլպէնկեանի որ կարեօր գումարներով նպաստ ու աջակցութիւն ընծայած է կեսարիոյ կարօտեալներուն և որբերուն, Զինադադարէն յետոյ։

և իզմիրի հետ, յարաբերութիւն և երթեւեկ ունեցած են, այլև արտասահմանի հետ, ուր ունեցած են ներկայացուցիչներ, եւ այսպէս այս ընտանիքին անդամները հաստատուած են, Իզմիր, Պոլիս, յետոյ Մանչէսթըր, Լոնտոն, Բարիկ, Մարսիլիա, և վերջապէս Ամերիկա, հետզհետէ ընդարձակելով իրենց վաճառականութեան ըլլաջանակը և զործանութիւնները, ինչպէս նաև ապրանքները որոնցմով կը շահագրըգոսուէին։

Տեղական ապրանքներու արտածումի զործին կցուեցաւ յետոյ եւրոպական ճարտարարուեստական ապրանքներու ներածում և ապա զորգի զործը, որ միայն Անտոլուի մէջ պատրաստուածներուն մէջ չը



Հանգուցեալ Գալուստ Կիւլպէնկեանի ծնույթը՝ Սարգիս եւ Տիրունի։

Այս պատուական ընտանիքը որ իր մէջ հաշուէ բազմաթիւ ազգային դէմքեր ու օգտաշատ անձնաւորութիւններ, ինչպէս արդէն ըսուած է իրը վաճառական ու առեւտրական ալ մեծ ու կարեւոր դեր մը կատարած է կեսարիոյ և շրջակայից մէջ։ Մասնաւորապէս իրենք նախաձեռնարկ կամ հնագոյն վաճառականներն են որոնք արտածութեան առեւտուրով զբաղած են այս առթիւ ո՛չ միայն Թուրքիոյ արտածման նաւահանգիստներուն, ինչպէս կ. Պոլսոյ

սահմանափակուեցաւ, այլ Պարսկականին և Կովկասիանին վրայ ալ տարածուեցաւ և այս կերպով կիւլպէնկեանք գացին Պարսկաստան և Կովկաս, և այդտեղերն ալ ունեցան իրենցմէ ներկայացուցիչներ։

Կիւլպէնկեաններէն ճիւղ մը Մէհմէտ Ալիի չըջանին եկաւ Եզիդոսու և հոս գարձաւ հողատէր։

Այս ընտանիքին բոլոր անդամները ներկայացնել միասմի իրենց զործերով անշուշտ կարելի չէ, սակայն պիտի ջանանք

մի քանի կարեսը դէմքերու վրայ գաղա-
փար մը տալ:

Դժբախտաբար ընտանիքին հին դէմ-
քերուն վրայ մեր ունեցած ձանօթութիւն-
ները հատուկտոր են:

Օրինակի համար անցեալ գարուն սկիզ-
բը կամ աւելի կանուխ այս ընտանիքին
անդամներէն էր կարապէս ամիրա Կիւլյանկե-
ան: Նոյնակս 1804-5 թուականներուն
կը յիշուի Պոլսոյ մէջ Յակոբ ալյա Կիւլ-
յանկեան, որ հաւանօրէն սեղանաւոր մըն
էր, և մտերիմն ու սիրելին արքունական
պաշտօնատար Իպրահիմ Քեհեայի:

Հոս յիշենք նաև այս ընտանիքին պատ-
կանող եպիսկոպոս մը, Պետրոս Նապս, աշ-
խարհական անունով Յակոբ, որ անցեալ
գարուն սկիզբը ապրող ուսեալ եկեղեցա-
կաններէն մին էր, և երկար տարիներ աշ-
խատած է Ս. Կարապէտի վանքին մէջ իրը
գրադիր կամ քարտուղար: Անիկա 1807ին
Մխիթար Արքայի ձարտասանութիւնը ըն-
դորինակած է իրը սղես համբակագոյն» էր:
Յետոյ անիկա կրօնաւորած է և կոչուած է
Պետրոս, և մինչև 1839 մացած է Ս. Կա-
րապէտի վանքը: Այս վարդապէտն է որ
յօրինած է իր հոգեւոր հորը Ստեփանոս
Արքապս. ի հրամանով պատասխանը այն
ստանաւորին՝ որ Տիւզեան Կարապէտ, Յա-
կոբ և Պոլսոս եղբայրները գրած էին 1823
Մարտ 18ին Ս. Կարապէտի վանքին մէջ
իրը աքսորական իրենց բնուկած յարկա-
րածնի մէկ սենեակին պատին ծեփին վրայ:
Այս պատասխանը նոյնակս ոտանաւոր, որ
իրը թէ սենեակին բերնով խմբագրուած՝
3 Յուլիս 1823ին գրուած էր, յույց կուտայ
թէ Պետրոս Վարդ. բաւական յաջողակ գրիչ
շարժող մըն էր: 1839ին հեռանալէ յետոյ
վանքէն, Շապին - Գարա - Հիւսար առաջնորդ
զացած է: Եպիսկոպոսանալէ յետոյ հա-
ւանօրէն այցելած պիտի ըլլայ իր ծննդա-
վայրը՝ Թալաս, որուն վարժարանին — որ
Կիւլյանկեանք կառուցած էին — նուիրած
է զիբքեր և ձեռագիրներ:

Կիւլյանկեան ընտանիքին ամենէն կա-
րեսը գէմքը սակայն եղած է Կիւլյապի
Զիլպի որ 1830-ական թուականներուն շի-
նած է Տէրէվանքին վիճակոր ջրամբարը և
ժամանակին կեսարիան յուղող ազգային
գէներուն խառնուած է: Կիւլյանկեանք՝

որ Մանիկօղլու - Ֆրէնկեան վէճերուն մէջ
Մանուկեաններու զլիսաւոր նեցուկը եղած
են, պահ մը նոյնիսկ դէկավար դեր ստանձ-
նած են, մասնաւորապէս 1840-50 թւա-
կաններուն երբ կեսարիոյ և չրջակայից մէջ
զլիսաւոր գէմքն էր Կիւլյապի Զէլէպի որ
սպանացած է 1848ին Կաթողիկութեան
դիմել իր պաշտպանած առաջնորդը պաշ-
տօնի վրայ պահնելու համար:

Այս պատկանելի և ազգեցիկ անձնա-
ւորութեան՝ Կիւլյապի Զէլէպի Կիւլյանկ-
եանի գաւակներն էին Մ. Սերովիք և Սար-
գիս Կիւլյանկեան եղբարք որ այս ընտանի-
քին համագգային նշանակութիւն մը և
համբաւ մը տուող զլիսաւոր գէմքերը ե-
ղած են: Երեց եղբայրը Մ. Սերովիք Կիւլ-
յանկեան ծնած է 1833ին Թալաս և իր
կրտսեր եղբօրը Սարգիսի հետ զացած է
Զմիւռնիա, վաճառականութեամբ զրազե-
լու համար: Հան երկու եղբայր կը հիմնեն
Կիւլյանկեան տունը որ եօթը տարի եզմիրի
մէջ շարունակելէ յետոյ Արիմի պատերազ-
մէն յետոյ կը փոխադրուին Պոլիս և հետզ-
հետէ Կ'ընդարձակին իրենց գործը, արտա-
ծութեան և ներածութեան վաճառականու-
թեամբ և սեղանաւորական գործերով ըզ-
բազելով: Թէպէտե Պոլիս հաստատուած՝
միշտ շահազդգուուած է Կեսարիոյ գործե-
րով և 1860ին Արամեան Բնկերութեան և
1868ին Ռւսումասարիաց Բնկերութեան ան-
դամ եղած է: Կ. Պոլսոյ մէջ արդէն 1860
ական թուականներուն ուշագրաւ հանդի-
սացած, 1869ին կը կոչուի Բ. Գրան կողմէ
հշանակուած առժամկեայ եւան ժողովի ան-
դամակցութեան:

1876-78ին անդամ է Քաղ. Ժողովի,
որմէ յետոյ 1878 Նոյեմ. Յին Ազգ. Հիւ-
սանդանոցի Հոգաբարձութեան անդամ
կ'ընտրուի, և մինչեւ իր մահը այդ պաշ-
տօնին վրայ կը մնայ, հակառակ անօր որ
1885 Յուլիս 15ին Քաղ. Ժողովի ալ ան-
դամ ընտրուած էր:

Այս Հոգաբարձութիւնը, որուն ատենա-
պիտն էր Միքայէլ Յակոբեան, այն պատ-
կառելի մարմինն էր որ յաջողեցաւ Ազգ.
Հիւսանդանոցի ի կիմանէ նորոգութեան մեծ
գործը զլուխ հանել յաջողութեամբ և ան-
դամուալի անուն թողուլ մեր տարեզրու-
թեանց մէջ:

Այս առթիւ կիւլպէնկեան եղբարք միահնը 4000 սոկի նույնատուութիւն մը բրած են, առանց հաշուելու այն պարբերական և տեական նույնատուութիւնները և նպաստները որոնք տուած են Ա. Փըրկչէնկեան հաստատութեան, որ մինչև ցարդ այս ընտանիքին մասնաւոր հոգածութեան առարկայ եղած է, և որուն ոչ միայն նպաստած են նիւթապէս, այլ անոր մատակարարութեան գործին մէջ կարեւը դեր և մեծ աշխատութիւն ունեցած են իր Հոգաբարձու:

Կիւլպէնկեան եղբարք շինած են նաև թաւասի ազիլէնկերու վարժարանը և Զօմախուի եկեղեցին, կարեւոր նպաստները բրած են Հայաստանի Սովետոց Յանձնաւժողովին, ինչպէս նաև Պոլսոյ բարեկաչտական կրթական և կրօնական հաստատութեանց և բոլոր օգտակար ձեռնարկներուն:

Մ. Սերովէ կիւլպէնկեանի մարմինը ի նշան երախտագիտութեան թագուեցաւ Ա. Փըրկչէն Ազգ. Հայանդանոցին մէջ ուրուն բարերարը եղած էր:

Իր պղտիկ եղբայրը՝ Սարգիս կիւլպէնկեան ծնած է 1836 Յունուար 28ին, թալաս և մանկութիւնն ու երիտարարութիւնը անցուցած իր ծննդավայրին մէջ և ապա իր եղբօրը Մ. Սերովէի հետ Զմիւռնիագացած է և վաճառականութեամբ զբաղած, և անոր հետ եկած Պոլիս, ուր միասին առանձված են իրենց համար փայլուն զիրք մը: Սարգիս կիւլպէնկեան գանձապետն էր Ռւսութեասիրաց Ընկերութեան՝ որ 1868ին կազմուած էր տպարան մը հիմնելու համար կեսարիոյ մէջ: Այս պատճառով էր որ իրը Ընկերութեան դրամագլուխը 1878ին թուրքիոյ մեանկութեան հետեանոք վատանգուեցաւ, մեացորդ գումարը մեաց իր քով և պահպանուեցաւ, և շահագործմամբ 800 սոկի հասած էր, երբ 1899ին Տրդութեան Պալեանի խնդրանքով իր գաւակը՝ Գառնիկ կիւլպէնկեան այդ գումարը յատկացուց Ա. Կարապէտի Բարձրագոյն վարժարանին նոր չէնքին կառուցման:

Սարգիս կիւլպէնկեան վարած է նաև ազգային պաշտօններ:

1889-91ին Սահակ Ղազարսահանի վարչութեան անդամակցած է:

Մեռած է 1893 Յունուար 25ին և իր

մարմինն առ թաղուած է Ա. Փըրկչէն Ազգ. Հիւանդանոցի շրջափակին մէջ:

Մ. Սերովէ կիւլպէնկեանի զաւակներն են Պատրիկ, Յովիաննես, կիւլլալի և Յաւուրիւն, որոնք կիւլպէնկեանց անուննն նոր փայլ ու փառք տուին, ոչ միայն իր վաճառական իրենց գործառնութիւններով այլ մանաւանդ իր այր բարեգործ, որի ու զգացումի մարդիկ և իր զիւռեան ու մարդասիրական զգացումներով օժտուած ազնիւ անհատներ:

Ասոնց մէջ թէ իր անդրանիկ և թէ իր կերպանցապէս ազնուանողի, հայրագորով և զթասիրատ, առաջին տեղը կը զրաւէ Պատրիկ կիւլպէնկեան, իսկապէս ազնըւական հոգիով բարերարը, որուն կիւանքը ամբողջ նույնումի ու սիրոյ շրջանուկով մը պարուրուած է: Կհոարիոյ այս մեծ զաւակը, թերեւս իր նույնիրատու և բարերար անմերցակից չէ և զուցէ իրմէն աւելի տուողներ եղած են, սակայն իր տալու եղանակին ազնուականութիւնը շատ քիչիրն են որ ունեցած են:

Պատրիկ կիւլպէնկեան իր բարերարութիւններուն մէջ կրցած է սիրու և միտքը իրարու լծորդել և խմասուն բարերար մը հանգիստանալ, որ իր նպաստը կրցած է արդիւնաւորի և ծառայեցնել զերազանցապէս ազնիւ, օգտակար և գեղեցիկ զաղափարներու:

Պատրիկ կիւլպէնկեան ծնած է 1858 Ապրիլին՝ թալաս, և իր նախնական կրթութիւնը իր ծննդավայրին մէջ ստանուէ յետոյ եկած է կ. Պոլիս և նախ աշակերտած է Խասպիւղի Շահնազ արեան վարժարանին, ապա Խոսպիրթ Պոլէճի, որուն շրջանը տարտիկ յետոյ մասնակցած է զարչութեան իր հօրը և հօրեցորը հիմնարկած կիւլպէնկեան մէծ տան գործառնութեանց, որ արդէն այդ թուականին ճիւղեր ուներ թուրքիոյ բոլոր զիխաւոր քաղաքները, մինչև Պաղտատ, ինչպէս նաև անկէ զուրս, Պարսկաստան (Պավրէժ), Կովկաս (Թիֆլիս), ու նաև Պալքանեան երկիրներու մէջ, և Ֆրանսա (Մարսիլիա):

Հայրը՝ Սերովէ կիւլպէնկեան երբ մեռաւ 1886ին, Պատրիկ կիւլպէնկեան, երիտարարգական կորովով և աշխայժով ստանձնեց զեկավարութիւնը տակւարական

այս մեծ տան, իր հօրեղբօրը Սարգիսի և իր կրտսեր եղբայրներուն հետ:

1890ին կիւլպէնկեան փիրման կ'ունենար իր ճիշդերը նստ կոնտոն և նիւ եսրք, և կը ստանար նոր փայլ ու ընդարձակութիւն, սակայն յաջորդ քաղաքական պատահարները, որոնք թուրքիան կը տագնապէին և Հայոց համար անապահով վայր մը կը դարձնէին, պատճառ եղան որ կիւլպէնկեանք իրենց գործանութիւնները կամաց կամաց սահմանափակեն թուրքիոյ մէջ եւ տեղափոխուին արտասահման, իրենց հետ թուրքիայէն գուրս հանելով իրենց զրամագլուխը, եթէ ոչ ամբողջութեամբ գէթ մեծ մասամբ: Կիւլպէնկեան առեւտրական տունը այս հեռատեսութեան և իմաստութեան քայլին կը պարտի յաջորդող զարուրելի պատահարներէն նուազ լինաւուիլը և արտասահմանի մէջ իր յաջող գործառնութիւններով, իր տեւականութիւնը ապահովելը:

Պատրիկ կիւլպէնկեան, իր կեօարական ձեռներէցութեան՝ որ իրը առեւտրական ցոյց տուած է, միացուցած էր իր ընտանիքին աւանդական ազնուականութիւնը և ազգային ամէն ձեռնարկներու բերած է իր մասնակցութիւնը: Բայ թէ հայրը Սերովքէ, Ազգ: Զիւանդանոցի Հոգաբարձութեան անդամ էր երբ մեռաւ 1886 Փետրուար 10ին, և Զիւանդանոցի վերաշնուրութեան գործ տակաւին անկատար էր: Քաղ. ժողովը անմիջապէս իրեն յաջորդ նշանակեց իր զաւակը՝ Պատրիկ կիւլպէնկեանը, որ մինչև 1891 այս հոգաբարձութեան մէջ աշխատել յիտոյ 1891ին կրկին վերընտըռուեցաւ և մինչև 1894 Փետր. դարձեալ վարեց Հոգաբարձուի պաշտօնը: Այս ժամանակամիջոցին պահ մը (1889ին) Երուսաղէմի Ս. Փրկիչ վանքի վերանորոգութեան համար հանգանակութիւն մը կը կատարէ կ. Պոլոսյ մէջ Յարութիւն պատրիարքի խնդրանքով:

1894 Սեպտ. ին դարձեալ Զիւանդանոցի Հոգաբարձու կ'ընտրուի սակայն կը մերժէ պաշտօն ստանձնել:

1895-96ի արիւնալի դէպքերէն յիտոյ, երբ ազգային իշխանութիւնն իսկ կը կազմակուծուի, Զիւանդանոցն ալ տագնապի կը մատնուի:

1896 նոյեմ. ին, Օրմանեան պատրիարքի ընտրութեամբ երր նոր չըջան մը կը բացուի վերակազմութեան և դարմանումի, Ազգ: Զիւանդանոցի տագնապին համար ալ զարմաններ խորհիլ կը մտածուի, սակայն կարելի չըլլար: 1897ի սկիզբը կազմուած Հոգաբարձութիւն մը հազիւ 10 ամսուան պաշտօնավարութենէն յիտոյ ձեռնիմափ կ'ըլլայ: Զօրաւոր Հոգաբարձութեան մը պէտքը ամէն ոք կը զգար և ամէն աչք ուղղուած էր կիւլպէնկեան ընտանիքին նախանդամին: Պատրիկ կիւլպէնկեանի վրայ, որուն զիմում կ'ընէ Օրմանեան պատրիարք, օր մը յանկարծ անոր զրամանեակը երթալով և յիշեցնելով այն սէրն ու գուրգուրանքը որ երբեմն իր հայրը և իր հօրեղբայրը և ինք ունեցած էին արդ հասաւատութեան վրայ, որուն լծորդուած էր իրենց անունը: Այս յուզիչ կոչը որ ազգին անունով պատրիարքը իրեն կ'ընէր, տկարացուց զինքը և անիկա խոստացաւ կազմել Հոգաբարձութիւն մը, իր ատենապետութեան տակ: 1897 Հոկտ. էն մինչև 1898 Յուլիս հարելի կարելի եղաւ զանել այս ձանը պաշտօնը վարելու յօժարող քանի մը անձ, և մինչև այն ատեն Հիւանդանոցը կառավարուեցաւ վարչական յանձնաժողովով մը:

Պատրիկ կիւլպէնկեան 1898 Օգոստ. ին կողմէ ընտրուած ընկերներով պաշտօնի ձեռնարկեց և մինչև իր Ամերիկա մեկնումը պատուով և անօրինակ յաջողութեամբ մը այդ տագնապի ժամանակամիջոցին մէջ կրցաւ Զիւանդանոցը դնել իսկապէս ներկայանալի վիճակի մը մէջ, կառուցանել յաջողելով հոն հիւանդարանի երեք բաժինները որոնք կոչուեցան կիւլպէնկեան, Յակոբեան և Ուննեան, զանոնք կառուցանող բարերարներուն անուններով:

Պատրիկ կիւլպէնկեան, որ այնքան մեծ սէր ունեցած էր այս հաստատութեան վրայ, որուն թէ նիւթապէս և թէ՛ բարոյապէս օժանդակած էր, մինչև վերջը չդադրեցաւ իր հոգածութեան առարկայ ընելէ և նոյն իսկ մահուան անկողինի մէջ անոր վրայ կը մտած էր: Պատրիկ կիւլպէնկեան բացի Հիւանդանոցի Հոգաբարձութենէն մասնակցած է Արմաչի Դպրեվանքի և Սահմանարքութեան վարժարանի ինամակալութեանց:

1887 Մերտ. 15ին անդամ ընտրուած է նաև Քաղ. ժողովի և կանոնաւոր երշամեայ մը անդամակցած է նոյն ժողովին:

1894ին Իզմիրլեան պատրիարքի հետ պաշտօնի մտած Քաղ. ժողովին ալ անդամ ընտրուած է, սուկայն հրաժարած է:

Իսկ 1896 Յուլիս 24ին Իզմիրլեանի հրաժարականէն յետոյ երբ Բ. Դուռը առաջամեայ Խառն ժողով մը ընտրեց, վաճառական դասէն անոր անդամ կարգուեցաւ Պատրիկ Կիւլպէնկեան, որ Նուրեհանի ընդդիմագիրներուն մէջն էր:

Ամերիկա փոխագրուելէն յետոյ, թէ առողջական պատճառներով հեռու մնացած է պատասխանատու պաշտօններէ, սուկայն առաջամեայ պարտականութիւններ ստանձնած է, թէ չափական արգելքի հակառակ և աշխատած է եռանդով: Յաճախ նիւ Եսրքի հայութիւնը ծափահարած է զինքը, ոչ միայն իրը առատաձեռն նուրիստու, այլ նաև իրը նախագահ հրապարակային ժողովներու: Պատրիկ Կիւլպէնկեան, որ 1896ին այցելած էր Երուսաղէմ, 1925ին, Բարգէն Եսրու: Կիւլէսէրեանի ջանքերով, յանձն առաւ Ա. Յակորի վանքին մէջ եկեղեցականութեան պատրաստուողներու համար կազմուած դասարանի մը ծախքերը վճարել տարեկան 1000 սովիով, հինգ տարի յուղորդաբար, իր եղբօր Կիւլպալիի և զաւակին Սերովիի յիշատակին համար:

Պատրիկ Կիւլպէնկեան, զօր նիւ Եսրքի Կիսարացիները կը կոչէին պալա, Պատուակալ և ցկեան նախագահն էր Կիսարիոյ Ազգագալաթիւամ Ընկերութեան որ յետոյ վերածուեցաւ Կիսարիոյ Վերաշնիական Միութեան, և միշտ կը շահագրգուռէր անոր գործերով և գրեթէ վերջին տարիներուն՝ երր ցաւեր և կոկիծներ յաջորդաբար զինքը հարուածած էին, անիկա ուրիշներու ցաւերուն դարման տանելու նուրիած էր ինքինքը, և առատաձեռնութեամբ կը պատասխանէր միշտ իրեն եղած զիմումներուն, Կիսարիոյ Կիսարացիներուն, Ազգ. Հիւանդանոցին և այլ բազում կարօտութեաներու համար:

Պատերազմէն վերջ Կիսարիա հաւաք-

ռած ամէն տեղացի կարօտեալներուն անկ'օգնէր այնքան չափով որ Կիսարիոյ վերաշնութեան Միութիւնը կ'օգնէր և յամախ աւելի գումարով:

Երբ 1928ին Կիսարիա զանուող 161 որբերը բերուեցան Հ. Բ. Ռ. Միութեան օգնութեամբ Պէյրութ՝ Քէլէկեան-Միութեան որբանոցը, ինք և իր եղբայրը՝ Տիար Յարութիւն Կիւլպէնկեան, զեց տարուան համար յանձն առին տարեկան 2000 տոլար վճարել, որբերու հոգատարութիւնը ապահովելու համար:

Այս առթիւ Գահիրէր Կիսարիոյ և Շրբակայից Հայրենակցական Միութիւնը զինքը բարերար անդամ հոչակեց:

Ի յիշատակ իր սիրեցեալ և վաղամեսիկ կենացին, Տիկ. Վերժին Կիւլպէնկեանի (ծն. Մանուկեան + 1903 Յունուար 25) և անոր անունով՝ Հալէպի մէջ Մայրանոց - Հիւանդանոց մը շինել տուաւ, սուկայն առանց անոր բացումը տեսնելու իր մահկանացուն կնքեց:

Ծրագիր ունէր նաև Հալէպի մէջ կառուցանելու Ռևուցչանոց մը:

Իսկ Սիլանիկի մէջ հաստատած է Կիւլապի Կիւլպէնկեան վարժարանը, որ կը մատակարարաւի կ. Կիւլպէնկեան Հիմնադրամով: Իր հանրային գործունէնութեան վերջին դրուացները եղան լ. Զերազի և Եղիշէ Պատրիարք Դուռեանի Յորելինական Յանձնաժողովներուն կազմութիւնը հովանաւորելու գործերը:

Իր նպաստով լոյս տեսաւ Հայ Կրթական Հիմնարկութեան խնամով երիմեանի երկերու ժողովածուն:

Պատրիկ Կիւլպէնկեան մեռաւ 12 Յունի 1930ին ի նիւ Եսրք Բոլիքինիքի հիւանդանոցին մէջ և թաղուեցաւ Վուտլոն գերեզմանատունը:

Պատրիկ Կիւլպէնկեան ունեցած է չորս զաւակներ, Ներօէս, Սերովիէ, Հերմինէ և Շուշան:

Ասոնցմէ Տիար Ներակ Կիւլպէնկեան որ հաստատուած է հրմա Լոնտոն, իր որդի հարազատ, իր հօրը բարեսիրական և մարդասիրական զգացումները իւրացուցած է և անոր պէս առատաձեռնորդէն կը տրամադրէ իր զրամական նպաստները ազգային կարօտութիւններու:

Դժբախտութիւն մըն է որ Տիար Ներսուն կիւլպէնկեանի հայրական սիրող կարգիւր խոցուեցաւ կորսնցնելով 1928ին իր միակ մանչ զաւակը՝ Պօլոսիկը, 14 տարեկան ծագիկ հաստիին մէջ։ Անոր անունը յաւերժացնելու համար իր հայրը միշտ իր նուրառուութիւնները կը կատարէ անոր յիշատակին։

Սերովիք՝ երկրորդ զաւակը Պատրիկ կիւլպէնկեանի, պատուական երիտասարդ մը, 1918ին, Երևանու իրենց Հինգերորդ Ավլոնիւ վաճառատան մէջ յիմար ոճարագործի մը զննակին զոհ գացած է իր հօրեղբօրը կիւլապիի հետ։

Հերմինիկ՝ տիկինն է Հ. Բ. Բ. Միութեան կեղը։ Վարչութեան գանձապետ Լիւսն կիւլպէնկեանի, և Ենւեան կողակիցն է կեսարիոյ Վերաշնական Միութեան կեղը։ Վարչութեան նախագահ՝ Տիար Մարտիկ Պալեօղեանի։

Մ. Սերովիք կիւլպէնկեանի երկրորդ զաւակն էր Յովինաննես, որ նոյնպէս Ռոպէրի Գուլէնի չըջանը աւարտած աղնուական երիտասարդ մըն էր որ ամուսնացած էր Օր. Արտօսի Վահաննեանի (Դատական Նախարարի Խորհրդական Վահան էֆ. ի աղջիկ) հետ։

Յազհաննէս կիւլպէնկեան և իր կինը զգբախտ վախճան մը ունեցան մէկ ամսուան ընթացքին իրարու հանեւէ մեռնելով։ Ամսուանը մեռաւ 9 Յունուար 1894ին և տիկինը 5 Փետր. 1894ին։ Երկուքն ալ կը հանգչին Ա. Փրկչեան Ազգ. Հիւանդանոցի չըջափակին, կիւլպէնկեանց յատակ գարանին մէջ։

Կիւլլսպի կիւլպէնկեան՝ երրորդ որդին Մ. Սերովիքի, ինչպէս յիշեցի, զոհ գացած է 1918ին իր եղբօր որդւոյն Սերովիքի հետ ոճիրի մը։ Այս առթիւ Պատրիկ և Յարութիւն կիւլպէնկեան եղբարք յաւերժացնելու համար յիշատակը տարաբախտ զոհերու կազմած են կիւլպէնկեան հիմնադրամ

մը որուն հասոյթներով կը մատակարարուին կարգ մը հաստատութիւններ և նըսպասոններ կը արուին կարստեալներու և Պէյրութի մէջ չինուած է կիւլլապաշէնը իրոր զաղթակայան։

Իսկ չորրորդ զաւակը Մհ. Սերովիքի Տիար Յարութիւն կիւլպէնկեան, արգի պատուակալ նախագոհն կեսարիոյ Վերաշնական Միութեան և գանձարակը Հ. Բ. Բ. Միութեան Ամերիկայի Շրջանային Մարմուն։

Ծննդ է 1871 Ապրիլ 18ին Մկիւտար, կ. Պոլիս։ Իր նախակրթութիւննը ստացած է Գատը զիւղի Արամեան վարժարանը և միջնակարգ կրթութիւնը՝ Ռոպէրիթ Գուէնի մէջ, որուն չըջանը աւարտիէ յետոյ կիւլպէնկեան առեւտրական տան գործառնութիւններուն մէջ ինքն ալ իր բաժինը ունեցած է և երր կիւլպէնկեանք արտասահման փոխազրուած են ինքն ալ անցած է Ամերիկա, ուր մասնաւորապէս զբաղած է արևելեան գործերու վաճառականութեամբ։ Ինքն ալ իրը հարազատ կիւլպէնկեան մը ժառանգործն է իր ընտանիքին աղնուական զգացումներուն և կը չարունակէ ընտանիկան իր զաստիրակութեան համաձայն զիրշագատանին սովորական հղած առատածենութեամբ օժանդակի ազգային կարստութիւններու և մատակարարի իր տարաբախտ եղբօրը և եղբօրորդւոյն կիւլլապիի և Սերովիքի անունով կազմուած հիմնադրամը։

Տիար Յարութիւն կիւլպէնկեան ունի չորս զաւակներ, Եզուարդ, Վէրժինիա, Արտօսի և Առնիա։

Ամերիկայի Հայ զաղութին ամենէն յարպելի ու ամենէն մեծարուած անդամներէն մըն է։

Իսկ Արգիս կիւլպէնկեանի (1836-1893 Յունուար 13 †) զաւակներն են Գալուս և Գալոնիկ, առաջինը հիմա միջազգային զէմք մը, իրը քարիւղի իշխան և միլիոնատէր և միւսը՝ առեւտրական մը։


ԱՐԺԱԿԱՆ ԱԼՂՈՅԱՃԵԱՆ

(ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԿԵՍԱՐԻՈՅ)

(Բ. ՀԱՏՈՐ)

ՅԱՐԳԱՆՁԻ ՏՈՒՐՔ ՍԸ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ Գ. Ա. ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆԻՆ



Այս յօդաւոծքը՝ մասնակի յազգաւումներով բարգմանած հմ՝ Iraq Petroleum ամսութեայ խանդեէն:

ԽՄԲ.


Անցեալ գարու ուժուունական թուականներու կէսին, երիտասարդ մը կօնտօն եկաւ մեքենագիտութիւն ուսանելու բինեղ թուէճի մէջ։ Եօթանասուն տարիներու ընթացքին, որոնք զի՞նք կը բաժնեն ութունամեայ ծերունիէն, որ մեռաւ 20 Յութիւնին կիզպոնի մէջ, ժրաշան երիտասարդ ուսանողը շատ մը զերեր պիտի կատարէր, վասնզի աշխարհ իրեն համար բեմ մը պիտի ըլլար։ Արուեստակէր, հաւաքող, միջազգային դրամատիկ, մարդասէր, քարիւզի մենատիկ, զիւանազէտ, հին զրամներու մասնազէտ, ոյլ բոլորը իր մէջ հաւասարապէս զարգացուցած էր, վասնզի որքան որ իր կեանքը երկար եղաւ, այնքան նաև գործօն և լեցուն։

Բայց զիտակցութիւնը փորձառութիւնն ու իմաստութիւնը աճելով հանգերձ, ու մանաւանդ կեանքը որ կը ժագոէր իրեն, բնաւ պատճառ մը չեղան որպէսզի իր մէջ նաև մանար Ռւսանողը։ Երկո՞ր տարիներ վերջ, տակաւին քաղցրութեամբ կը լիչէր կօնտօնի իր ուսանողութեան օրերը։

Ժողովրդային մամուլը միշտ ներկայացնուց զի՞նք իրեւ խորհրդական մարդ մը, տարօրինակ այլ վախազզեցիկ հոկայ մը ու իր անունին կցեց մակդիր մը. — «Պրին. հինգ տա հարիւր»։ Անոնք որոնք զի՞նք աւելի լաւ ճանչցան գործակցելով իրեն հետ, կրնան վկայել խանդաղատանքով և սիրով լեցուն, տինամիկ մարդը իր մէջ։ Անսահման համբերութեամբ, այլ անտեղիտալի յամառութեամբ բանազնաց մըն էր, անընկճելի իր իրաւունքներու պաշտպանութեան մէջ, բայց միշտ հետատես պատրաստակամութեամբ մը, ընդունելու համար որ

իր շահերը յաջող չէին կրնար երթալ, ուրիշներու լինա պատճառելով։

Խորհրդաւոր ոչինչ կար իր յաջողութեան չուրջ. անիկա միշտ քաջութիւնը ունեցաւ ամրօրէն կառչելու իր համոզումներուն որոնք ընդհանրապէս ճիշդ կ'ըլլային։ Իր ձեռներէց ոգիով զիտեր թէ որքան



ամսուր էին այն բոլոր ճարտարարուեատական յանձնառութիւնները որոնց կը ձեռնարկեր. իր սկզբունքներէն մին, իր զործերուն համար կարող և հաւատարիմ մարդեր ընտրելն էր, որոնց լաւագոյնո կը վարձատրէր։ Ի վերջոյ, տիպար մըն էր որ ամբողջ էութեամբ կը նուիրուէր իր զոր-

ձին, անխօննջ կերպով զլուխ հանելու համար սկսուած աշխատանք մը, բայց զիտեր հաս հանգիստ ընելու ազնուական կերպը, — իր պարտէզին մէջ, իր արուեստի զանշերուն մէջ և կամ իր կենդանի խօսակցութեամբ:

Աւանդութեան հնկան ու զախազգեցիկ մարդ մը ըլլալէ շատ հեռու, իր գարուելակերպին մէջ շատ ազնիւ էր ու «հին» քաղաքավարութիւն մը ցոյց կուտար: Իր անձը մասնաւոր հմայք մը ունէր, և արուեստ մը կը զնէր իր արարքներուն մէջ իրեւ ազնիւ հիւրընկալ մը: Հանգուցհալ Պրն. Կիւլպէնկեան զարմանալիօրէն և աչքի զարնող կերպով զերծ էր զուոզութենէ և մասնաւանդ կեզծիք: Ինքինքին իրեւ չէր ներեր զուոտախօս ըլլալ: Հզուրառութիւնը հոմանիւ էր իրեն ուամկութեան, և թերես այս փափաքն էր որ — ցուցամուլութենէ և մեծարանքէ հեռու ըլլալը — բնականէն մեկուսի ապրելու բնաւորութեան միացած, մենակեացի մը տապաւորութիւնը ստեղծեց:

Պրն. Կիւլպէնկեանի ամենէն կարեւոր և ամենէն աւելի իրմէ ժամանակ և ճիզ պահանջող զործը եղաւ իր արդիւնքին մէջ տակաւ առ տակաւ առատացող Լ. Բ. Շ. Ընկերութիւնը: (Իրաքեան Քարիւղի Ընկերութիւն): 1914ին տակաւին նոր կը սկսէր մտածուիլ իրաքեան քարիւղի շահարկման մասին, մինչ այսօր տարին 32 միլիոն թուն արտադրութիւն ունի Ընկերութիւնը որուն մէջ կարեւորագոյն զերը ստանձնելը, սկիզբէն մինչև այսօր իրեն զինակուեցաւ:

Արդ, քառասուն տարուան անխօննջ և արկածախնդրական կեանքի մը արդիւնք՝ իր արգար վաստակը պիտի յատկացուի «Փալուաս Կիւլպէնկեան Հիմնարկութեան» միջոցաւ զուտ բարենպատակ հաստատութիւններու, զիխաւորաբար ուսումնական, զիտական և մշակութային:

Անտարակոյս, աշխարհ մեծ զէմք մը կորսեցւ յանձին Պրն. Գ. Կիւլպէնկեանի, իսկ իրաքեան Քարիւղի Ընկերութիւնը իր մեծ և շատ կարող Տնօրէններէն մին, ուրուն քառասուն տարուան վաստակը, անզնահատելի ծառայութիւններ մատուցած է Ընկերութեան:

N. M. E.

ԱՆՄՈՒԱՆԱԼԻ ՅԻՇԱՏԱԿ

1873 տարուան ձմբան հղանակը, Փոքր Ասիոյ միջավայրին մէջ, առաօրինակ էր: Տարօրինակ ձմեռ, տարօրինակ ձիւն: Նույեմբերի տառաջին քառորդէն, իրը չորս ամիս շարունակ, Մեծին կեսարիոյ ճամբաները փակուած էրն, և երթեւկելութիւնը գրեթէ բոլորովին դադրած, նոյն իսկ զիւղէ գիւղ:

Սաստիկ ձմբան այս երկարատև ժամանակին համար, կեսարիոյ քաղաքին, և մօտակայ զիւղերուն պատրաստի ունեցած պաշարը բաւական չէր: Ժամանաւորապէս հացի պէտքը որ ըստ օրէ զգալի կ'ըլլար, և մօտալուս ողութիւնը՝ որ արդէն կը սպանար, տիրեց: Ազութիւն մը՝ որ նոյնպէս տարօրինակ էր, ձմբան պէս: Հացի զինը որ կ'արժէր մէկ կրկնապատկուեցաւ, ո՞չ, — այլ՝ քառապատկուեցաւ: Հնդապատկուեցաւ: Հացը պակսեցաւ, ինչպէս աղքատի տնակէն, նայնպէս հարուստի տունէն: Յուսահատութեան ծանր վիճակի մը այս գարկեաններուն մէջ, ահաւասիկ կեսարիոյ Արքակ Գարուսը ըսուած արահետէն ներ կը մանէն ցորեն և ալիւր բռնցած 200էն աւելի ուզտեր, որոնց առջեկի ուզտապանին և զայն չըջապատող երկու տասնեակ սպասաւորներու պեխերէն և մօրուսներէն վար նուրբ ու բարակ սառեր կախուած էին: Կարմիր կաշեպատ մուշտակներու պլլուած այս քաջարի մարդկիը, կարծես արհամարհնով սաստիկ ցուրտը, ձիւնն ու բուքը, և հպարտութեամբ զիմազրելով սաստկաչունչ հովերուն, օրտի ամենաքաջը զայնունակութեամբ կը մանէն քաղաքէն ներս:

Կայծակի արտազութեամբ տարածուեցաւ լուրը քաղաքին մէջ, և առհասարակ ամէն զասակարգ փութաց իր բաժինը սատանալու, աղքատը՝ առանց փոխարինութեան, հարուստը՝ վճարումով, ո՞յնքան՝ որքան որ արժէքն էր: Եւ ասիկա կրկնուեցաւ քանից: Յուսահատութիւնը փոխուեցաւ միսիթարութեան, տրտմութիւնը փոխուեցաւ ուրախութեան:

Ուրկէ՞ կուզար այս հացը։ Ահաւասիկ։ Էօրինաքնիւթիւնի վրանարնակ ցեղին պատկանող, և հարիւրաւոր ուղտերու տէր Գամփիր, և իր կրտսեր եղբայրը միականի մէջի, ձմրան սաստկութենէն և երթեւկի դժուարութենէն, կենդանիները թօգատի սահմաններուն մէջ, այլ և այլ այրերու խորը պատսպարած իրենց սպասաւորներով, իրենք ալ Գագ-Օվա անուն բնակավայրը, վրանի տակ, ճոխ կրտսեր առջն հանդիսատ կ'ընէին, վրանարնակ կեանքի ամէն ճոխութիւններ։

Կեսարիոյ թալաս գիւղաքաղաքացի Գրիգոր Ղազէրեան անուն անձը, որ մօրեղբայրն է, իրեն եղած հրամանի մը վրայ, թօգատէն տաղաւարը հասած էր, մէկ օրուան ճամբան հազիւ երեք օրէն կտրելով, ցուրտէն ու բուքէն զրեթէ թժրած։

Գրիգոր նամակ մը բերած էր, Գամփիր և մէկի ուղղուած, և ահա թէ ինչ կ'ըսէր այդ նամակը։

«Եամի՞ ի սէր Աստուծոյ, ապա՞ ի սէր սովատանջ ժողովրդեան կեսարիոյ և ըլբաղակայից, որոնք կը տառապին սղութենէ և հոցի պակասութենէ, կը խնդրենք ձենէ, որ կամ Երզնկայէ և կամ Մերաստիայէ, ուր կը գտնուին առատ արմատք, ցորեն և ալիւր, և զորս պիտի պատրաստեն մեր գործակատարները, հաճիք տանիլ կեսարիա։ Փոխազրութեան համար ո՞րքան վարձք ո՞ր պահանջուի ձեր կողմէ, անմիջապէս պիտի վճարուի։ Մեր այս առաջարկութիւնը ընդունելով, եթէ անյապազ հասցնէք ցորենն ու ալիւրը կեսարիա և թալաս, պէտք է զիտնաք թէ այդ ձեր ընելիք գոնոզութեամբ, մեծ ուրախութիւն պիտի պատճառէք մեղի, և ձեր այս թանկապին ծառայութիւնը մենք՝ ձեր վաղեմի բարեկամները, երբեք պիտի չմոռնանք։»

Նամակը՝ որ գրուած էր թուրքերէն, և որուն միայն իմաստը ամփոփեցինք այս

տեղ, ստորագրուած և կնքուած էր երկու մեծանձն անձնաւորութիւններէ, աղքատասէր, ողորմած և բարերար ու բարեսէր երկու հարազատներէ, ՍերմՎԲէ և ԱՄԳԳի կիմկէնկեանէ։

* * *

Ընթերցումը հազիւ լրացած, դատիր՝ խօսքը Գրիգորի ուղղելով, կ'ըսէ։

— Եթէնտիները Պոլսոյ մէջ զուցէ անտեղեակ այստեղի ձմրան սաստկութեան, և ձիւնին պատճառով ճամբաններու փակումին, ո՞չ թէ դժուարին, այլ և անկարելի առաջարկութիւն մը կ'ընեն, զոր պիտի չկրնանք կատարել։

Բայց ահա կրտսեր եղբայրը, մէջի, որ իր մեծ եղբօր տուած պատսպանը լսած էր, կ'ընդմիջէ։

— Եղբա՛յր, ի՞նչ կ'ըսիս զուն, չէ՞ մի որ մենք այդ Եթէնտիներուն չնորհիւ շամած հնք հազարաւոր զումարներ և մեր հարստութիւնը զրեթէ անոնց կը պարտինք. անոնց ըրած այս առաջարկը ո՞չ թէ իրենց անձնական շահուն կը վերաբերի, այլ սովատանջ աղքատներուն, որոնց համար ամէն զոհողութիւն յանձն կ'առնեն, հետեւարար ես կ'երթամ ի սէր մեր բարերար բարեկամներուն, և ի սէր աղքատներուն։ Այս ծառայութիւնը կը խնդրեն մեղմէ յանուն Աստուծոյ, ուսորի եթէ երբեք կորսուիմ իսկ, կորսուին իսկ մեր ուղտերն ու կինդանները, հ'զ չէ, թօ՞զ նախախնամութեան կամքը օրհնեալ ըլլայ։

Այդ քաջասիրոտ Վէլին էր, որ վեհանձն և մեծ հոգի կիւլպէնկեան երկու հարազատներուն կողմէ հաց կը բերէր կեսարիոյ, թալասի և ըրջակայ գիւղերու սովատանջ և յուսահատած ժողովուրդին։

ՏՐԴԱԾ ԵՊՄ. ՊԱԼԵԱՆ

ԼԵՄԱՆԻ ԱՓԻՆ

ՀԱՀԻ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ

Երկնին բացուող մանկան մը արդար
Նայուածին նըման՝
Կը ժպտիս անուշ լին կախարդազեղ,
Նուրջդ դարաստան, այզի ու պարտէզ,
Մանեակ մը ինչպէս պարանոցիդ ռուրջ,
Դգուանիով զմրուիս :

Եւ այզն ամէն օր ոժերով սատափ,
Մազերով ոսկի,
Կ'անցնի ափերէդ,
Մինչ վերշալոյսին, երկնի խորէն
Զուրերուդ կ'իյնան ըղար առ ըղար,
Ոսկի ու լիլակ,
Արձար ու մոխիր :

Յեսոյ կը բացուին ափերուդ վրայ
Կոհակներ հազար լոլուրու կախարդ,
Մինչ զուրերուդ ծոց,
Հայելի մրին,
Կը կախուի երկինք, այզի մը ինչպէս
Ողլոյզներով սար :

Քաղաքն ու գիւղեր ամէն իրիկուն,
Զուարք ու ծիծղուն,
Լոյսերով առաս,
Նըման Նոր Տարւոյ ծառին ծաղկազարդ
Կը բոլորն նեզ,
Կոյս նոլանազեղ,
Որ նայուածներով կապոյս ու բըրուն՝
Քեզի կը կանչես հանոյի ծարսու
Միւրերը մարդոց,
Եւ նուազներու թեւերուն վրայ
Յուզումնաւրուփի,
Կը տանիս զանին անդունիներու մուր,
Կատարներու լոյս,
Դէպի հանոյի ասղերն անորու :

Ո՛ւ կը տրոփէ սիւրը բաղաքին
Լոյսով ու սիղմով,
Նուազներու ձայն,
Ենքնաւրժերու կոխնչը կերկեր,
Կը ձուլուին իրար,

Մինչ ճաշատութեր երզով ու պարով,
Կը դիմաւորեն ոյանելով հազար
Ողիններ փարքամ,
Երեն հարսնու
Ճամբոււ զիւերուան :

Լին կապուտազեղ,
Երեմն անդորր, երեմն երեռն,
Լարէն առկախուած ժամանակներու
Կը լսես այսպէս,
Հազար սիրերու տրփին աղեկեզ
Բացուած ջուրերուդ,
Ծփուն ու բիւրեղ,
Երիկուան հովի մրմունչներուն նես,
Մինչ վրադ կուզայ
Բանալ իր ողեր,
Տրտում լուսնկան,
Նըման փետուած վարդերու ներմակ,
Քեզի պատմելու պատճառն իր ցաւին
Ու սժզունուրեան :

ԵՊԻՎՈՐԴ

ԵՐԱԿՈՒ ԱՇՈՒՆՆ

— Տրտում ես ինչո՞ւ. —
Հարց սուին ծառին
Հովերը աւեան.
Եւ սարի լանջին՝
Ծառն այդ առանձին
Ուրտասուեց անձան :

— Ես կը մտածիմ
Իմ ցաւին վաղուան,
Երբ ձմեռը զայ : —
Նենչաց մեղմին
Ծառն, ու գրկեցին
Ճիւղերը զիւար :

Եւ աւեան հովին
Ճամբոյրէն բախծոն,

Օդապար, դեղին՝
Տերեւներն անոր
Մաներգ նիւսեցին :

— Մի ժարիր այդքան,
Պիտի հարսնանաս
Դուն կրկին՝ զարնան...
Բայց վայ յ, վայ Մարդուն,
Զի ձմեռն անոր
Զունի ալ զարուն : —

Մեղմ փափացին
Հովերը աւեան,
Ու անցան, զացին :

Վ.Ա.ՀՐՈՄ Մ.Ա.Վ.Ե.Ա.Ն

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅ ԿԵԱՆՔԸ

ԱՄՍՏՐԱՍԼԻՈՅ ՀԱՅ ԿԵԱՆՔԸ

•

Աւազ Հինգեաբրի, Զատիկի, Ապրիլ 24
եւ Սմզակ Տէյ Սիսնիի մէջ:

Իր փթթումին և ծլարձակման մէջ է Աւարալիոյ հայ աղդային եկեղեցական կիանքը: Կամաց կամաց եկեղեցական տօներ ու տօնախմբութիւններ կը կատարուին Ախտիի մէջ, ամէն Կիրակի անխափան տեղի կ'ունենայ Ս. Պատարագ. ունինք կոկիկ երգչախումբ մը և ամէն անդամ ալ բաւական ժողովուրդ կուգայ, բազդատմամբ մէր փոքրիկ թռւին:

Աւազ Հինգեաբրի օրը ունեցանք Ռունալուայի խորհրդաւոր ու որտառուչ արարողութիւնը: Բաւական ծնողքներ իրենց փոքրիկներով հեռուէն ու մօտէն եկած էին կարօտագին տեղչով մը տեսնելու և վայելիու խոնարհութեան յաւիտենական դասը զոր մէր Տէրը աւանդից իր աշակերտներու միջոցաւ այս աշխարհի բոլոր մեծերուն, ունայնացնելով իր աստուածային անձը մարզկային խոնարհ կերպարանքին մէջ. զիջաւ լոււանալու հոդեղէն խեղճ մարդոց բրտացած ու կոչտ ոտքերը, այն ոտքերը որ պիտի ներգաշնակուէին սուրբ և մաքուր զլուսիսի մը հետ և որ պիտի երթային արդարութեան ու սիրոյ ճանապարհներուն վրայ միայն, մարդոց տանելով կեանքի յաւիտենական նոր պատգամները, ուսած իրենց երկնաւոր վարդապետէն ու Գլուխէն՝ որ պիտի առաջնորդէր իրենց քայլերը զէպի աշխարհի քառուղիները, որրութեամբ ու խոնարհութեամբ լծուած Աւելուարանի գործին տանելով կեանքի բոլոր դառնութիւններն ու ծանրագին խաչելութիւնները, մասնալով իրենց անձերը իրենց սուրբ գործին ու նպատակին համար:

Պղտիկներ, աւելի միամիտ ու սուրբ քան մեծ առաքեալները Քրիստոնի, մասնակներ՝ որոնց ոտքերը զեռ չեն կոչտացած կեանքի տաժանագին ու քարքարոս ճամբաններուն վրայ, այլ զողարիկ ու աղաղուն, կուգան աշակերտներ ամառունուած կուզական աշխարհի մասնակները, առանց աշքերուն մէջ կը միշտ անկեղծ, որոնց աշքերուն մէջ կը չողայ աստուածային քաղցրութիւն մը և որոնք պայծառ երկնաքի մը պէս ջինջ ու մաքուր կը բացուին զիրենք սիրող սրտերուն վերեւ:

Ժեծ Վարդապետին, կոնքին մէջ երկարելով իրենց փոքրիկ տառիկները, առանց շատ բան կարինալ հասկնալու, սիրով և երկիւ զածութեամբ, ինչպէս այն ատենները իսրայէլացի մանուկները կը մօտենային իրեն: Մանուկները ամէն տեղ և ամէն ժամանակ Աստուծոյ մօտ ու սիրելի արարածներ են, նոյնիսկ եթէ երբեմն ազտուտ ոտքերով և կպչուն մատներով ըլլան: Աստուած այս աշխարհի խմաստուններէն և զիտուններէն կը ծածկէ իր խորհուրդները և կը յայտնէ մանուկներուն:

Սիտնիի մէր հայ մանուկները առաջին անգամն եր որ կը աեսնէին այս արարողութիւնները և հատաքրքրութեամբ կը զիտէին ամէն բան: Խոկ հասակաւորները բոլորն ալ իրենց երկրի հին յիշատակներովը լեցուած, կը փոխազրուէին տարիներ ետ իրենց փառաւոր ու շքեղ եկեղեցները, ուր երբեմն կային հայկական խուռն բազմութիւններ, սրտառուչ եկեղեցական արարողութիւններ ու հանգէսները, ամէն կողմ չէն ու պայծառ: Խոկ այսօր օտարութեան մէջ, անշուք անկիւն մը, համեստ յարկի մը տակ հաւաքուած փոքրիկ խումբ մը հայեր, զանազան երկիրներէ ու քաղաքներէ, քանիցս պանդխտացած և այսօր իրենց նոր պանդղլիստավրին մէջ կ'ունենան զէթ հոգեկան դոյզն միիթարութիւնը տեսնելու և լուելու իրենց ընտանի լեզուով ու ծէսով աղօթքներ, երգեր ու շարականներ: շատերու հոգիներուն խորը կը յառնեն հին հիշատակներ ու կը յուզուին բարի ու երջանիկ օրերու մտափոնութեամբ որ չկան այլեւս Պղտիկներ գոհ են և ուրախ, կարծես անոնց հոգիներէն ներս աներս ոյթ զօրութիւն մը կը կաթեցնէ երկնային չնորհք: մանուկներ միշտ անկեղծ, որոնց աշքերուն մէջ կը չողայ աստուածային քաղցրութիւն մը և որոնք պայծառ երկնաքի մը պէս ջինջ ու մաքուր կը բացուին զիրենք սիրող սրտերուն վերեւ:

Հայում: Դիշերէ, չուրջերնիս ամբողջ քնակչութիւնը խորունկ քունի մէջ է. մենք կոկիկ խումբ մը հայերս, զիշերուան այս պահուն, սոսուերու ու խոնարհ անկիւն մը հաւաքուած կը հսկինք, խաւարման խոր խորհուրդներով համակաւած: Տիրոջ մատնութեան, չարչարանքին ու Անոր վերջին խոսքերուն յուզիչ արամն է որ կը կատար-

ուի. կը հետեւին Աւետարանի սրտառուչ ընթերցուածներուն, Ա. Ներսէս Շնորհալի Հայրապետի հոգեզմալլ, աւետարանաշունչ երդերուն ու շաբականներուն, Ավագմաններու ողբանուագ ալէլուններուն։ Միրտերը կը փլին ու կը փղձկին, ամէն ինչ տիրազին խորհուրդի մը շունչը ունի աստաւածային սրտակեղեք տրամի պատկերին առջև։ Դարերու խաւարի մէջէն կը հոսի հեղասահ ու զովարար աղբիւրի մը պէս Աւետարանին տրամանուշ պատգամները սիրտերէն ներս սերունդներու, սրբացուցիչ ու փրկարար Բանին չունչովը։ մեղքին սլաքներովը վիրաւոր սիրտեր, քաւութեան տենջով մըտրակուած, կուզան այս զիշեր լոււալու իրենց մեղքերը՝ Քրիստոսի վերքերէն կաթող արեան կայլակներով, որոնք քսան դարեր առաջ Գողգոթայի մը բարձունքէն թափեց շիթ ու չիթ, մեղաւոր մարդոց սրբութեան ու փրկութեան համար ու կարծես կը ցօղէ իր արիւնը շարունակ, բուժելու համար մեղքէն զարնուած սիրտերը, մանաւանդ տարուան այս օրը և այս զիշերը։ Փրկագործութեան մեծ խորհուրդի այս ժամուն մարդիկ պահ մը հոգիացած կը վերանան այս աշխարհի նիւթեականացած ոլորտներէն, կը վնասուն իրենց կորսնցուցած երկինքին ճամբան, զէպի երկինք կը բացուին ու կը բարախն սիրտերը՝ մաքրութեան ու սըրբութեան իդաով լեցուած։ մեղաւոր սիրտերը կը բոցակիզուին ու կը հալին զիշերուան խորհուրդին հետ հատնող մօմերուն պէս։ աստուածային լոյսը կամաց կամաց կը կաթի մթին սրտերէն ներս ու կը լուսաւորէ։ Այսպէս կը հրաշագործէ Աւետարանը դարեր շարունակ հոգիներէն ներս մարդոց՝ որոնք կուզան ծնրադրել չարչարուող Յիսուսի խաչին պատուանդանին տակ հաղորդուելու Անոր մարմնոյ և արեան հետ, անմահութեան հաւատաքով ու յոյսով լեցուած։ Այսնիի մէջ հաւաքուած այս փոքրիկ հօտը զիշերուան այս ժամուն, ինչպէս աշխարհի միւս մասերուն մէջ, ինքն ալ հլու իր պապենական սուրբ հաւատքին ու աւանդութեանց, եկած է հոգեպարար այս արարողութենէն առնելու իր հոգեկան սընունդը, համբերութեամբ ու խոր հաւատքով հոկելով զիշերուան այս ժամուն։ Դարերու բոլոր վերիվայրումներուն մէջ ոչ ոք կըցաւ կապտել այդ հաւատքը իրմէն, որ

եղաւ իր փրկութեան ու գոյութեան լաւագույամը պատմութեան թժպէի օրերուն։

Զատիկի Հայկական առաջին պատմական Զատիկը տօնեցինք մեր համեստ աղօթատեղին մէջ։ Եկեղեցին լեցուն էր, ինչպէս նաև զուրսի փողոցը։ Ուշ եկողներէն շատեր ետ զացին, առանց կարենալ ներս մանելու 600 մզոն հեռաւորութենէն, Մէկպըընէն բաւական թիւով հայեր եկած էին Հայկական Զատիկը տօնելու մեղի հետ Ընկերական ու աղջային տաք մթնոլորտ մը ստեղծուեցաւ։ Պատարագի արարողութիւնը և երգեցողութիւնները անցան կանոնաւոր։ Պր. Ա. Յակոբեանը զեկավարեց երգի խումբը որ կը բարկանար չուրջ 15 հոգիներէ։ Երգեհնոնը կը նուագէր Տիկ։ Մարթա Արգարը, խակ Պր. Ատ. Բանիկեան կը սպասարկէր Սեղանին և բուրգան կ'ընէր։ Առհասարակ ամբողջ Բանիկեան ընտանիքը անխափան, այր և կին իրենց երեք զաւակներով, ամէն կիրակի ջերմեռանգութեամբ կը մասնակցին երգիւ խումբին։

Տօնական երջանիկ օր մըն էր Արտանիի հայութեան համար՝ որոնք բաւական տարիներէ ի վեր պատեհութիւն չէին ունեցած հայկական Զատիկ տօնելու։ Շատեր խոստովանեցան ու հազորգուեցան։ Պատարագէն յիտոյ սկսաւ հաւեկիթախաղը։ Տիկ. Բանիկեան, Տիկ. Հանկսեան և Տիկ. Քէչէճեան իւրաքանչիւրը քանի մը տասնեակ հաւեկիթ ներկած ու բերած էին եկեղեցի, որպէսզի Պատարագէն յիտոյ գեղեցիկ անակնեալ մը ընեն ժողովուրդին։ Հաւեկիթները բոլոր ձեռքէ ձեռք խուսեցան, միենոյն հաւեկիթը քանի մը անդամ ծախուեցաւ յօգուտ եկեղեցիին։ մեծ խանդավառութիւն ստեղծուեցաւ, օտարներն անդամ վարեկելով՝ որոնք հետաքրքրուած կը դիտէին թէ ինչ արտակարգ բան իրարու բերած էր այս ժողովուրդը։ Այս խանդավառութեան և ուրախութեան ազգեցութեան տակ երբ քանի մը աղջայիններ հաւատքուած էին Վահագն Ակինեանի տօնենը, ճիշդ եկեղեցիին հանդիպակաց կողմը, Վահագն 20 բառւտով բացաւ եկեղեցւոյ չինութեան փոնտը. իրեն հետեւցաւ իր եղբայրը՝ Խորէն Ակինեանը հարիւր բառունտով. հինգ վայրիկեանէն երկու հարիւրի բարձրացաւ անակնկալորէն սկսած այս հանգանակութիւնը։ Բոլորն ալ ողեօրուած են եկեղեցւոյ մը չինութեան

գաղափարով։ Տակաւին կազմակերպութեան
զործը յառաջ կ'երթայ, իսկ միւս կողմէն
հանգանակութիւնը կը շարունակուի կարգ
մը եռանդուն աղքայիններու կողմէ։ Կը
հաւատամ որ օր մը կ'իրականանայ և մար-
մին կ'առնէ մեր բոլորին հրազը, որքան ալ
որ փոքր ըլլայ մեր զաղութը և սահմանա-
փակ մեր միջոցները։ Զենք յուսահատիր,
ուր կամք կայ հոն կարելիութիւն։ Երբ մէյ
մը կազմակերպեալ ձեռվ գործի լծուինք
բոլորս, մեծ ու փոքր, ամէն բան կը յա-
ջողի։ Հայ ժողովուրդը երրեք կանց չառ-
ներ դժուարութիւններու առջն։ Մենք մեր
բոլոր ուժերովը պիտի փարինք գործին,
քարերէն ու հողերէն վեր պիտի բարձրաց-
նենք Հայ եկեղեցւոյ կաթուզիկէն ու մեր
բոլորին աղօթատան պատերը։ Սեռն սիրով
բոլորուած իրարու մօտ կ'աշխատինք բոլորս
ալ այդ ուղղութեամբ և Աստուած է որ
պիտի պսակէ մեր աշխատանքները յաջո-
ղութեամբ։ Այս առաջին Զատիկը հղաւ
ոգեսրութեան առիթ մը, յառաջիկայ Զա-
տիկը կը յուսանք որ եկեղեցի մը պիտի
բերէ մեզի, ուր անգամ մըն ալ պիտի ող-
ջազուրուինք իրարու հետ ուրախութեան
արցունքներով, ու հայութեան երրեմի
անձանօթ բեկորները պիտի գան իրարու-
թիստոսի յարութեամբը կենգանանալով և
ըլլալով մէկ հօտ և մէկ հօվիւ։ Զատիկէ
մեզի կը լեցնէ այս գեղեցիկ տեսսիլքով
Աւտրալիոյ հեռաւոր ափերուն վրայ։ Ի
պատրաստուին նորանոր ձեռնարկներ
նպաստ եկեղեցւոյ շինութեան ֆոնտին։

Ապրիլ 24: Ապրիլ 24ը եղաւ ուրիշ
նշանակելի օր մը Սիստիֆի հայութեան հա-
մար: Նախապէս եկեղեցւոյ կողմէն ըրջա-
բերական նամակներ զրկււած էին բոլոր
հայերուն, և ո՞ր հայը պիտի չգար այդ օր
ազօթելու մեզի հետ հոգիներուն համար իր
եղբայրներուն, քոյրերուն և բոլոր անոնց
որոնք կրօնի և ազգի սիրոյն խոզինողուած
էին և կամ տապաստ ինկած հայրենի լեռ-
ներուն վրայ, դաշտերուն մէջ, Սիւրիոյ և
Միջազգեաթի աւազներուն, Եփրատի ու
Տիգրիսի արբիւնաներկ ալիքներուն խորը:
Ո՞ր սիրու ունեցող հայը պիտի չգար գէթ
կաթիլ մը արցունք ցողելու իր աշքերէն
անոնց անթաղ շիրիմներուն վրայ, մոմ մը
վառելու, խունկ ծխելու անոնց յիշատա-
կին: Եկած էին գրիթէ բոլորը. Զատկուան

չափ ժաղղովուրդ հաւաքուած էր եկեղեցին,
խոհուն գէմքերով, վիրաւոր սրտով, ար-
ցունքոտ աշքերով. անոնցմէ շատերը այդ
անապատներէն, այդ սպանդէն ազատած,
տակաւին իրենց լիշողութեան մէջ կ'ապրէր
այդ եղենին ահաւոր տեսիլքը. շատերը
այդ անապատներու մէջ թողած իրենց սի-
րելիներուն դիակը անթաղ, եկած էին մոմ
մը վասելու, խառնելու իրենց մրմունջին ալ
քահանայի ազօթքին ու մրմունջին հետ
թախիծով մխացող հոգիներ, տարիներով,
քառասուն երկար տարիներով, ու զիշտը
իրենց կուրծքերուն տակ, հեռու հայկական
հոծ գաղութներէն, զուրկ հոգեկան բոլոր
մխիթարութիւններէն, այսօր սակայն հե-
ռուէն ու մօտէն հաւաքուած են իրենց
գառն կորուստի կակիծը բաժնելու իրարու
հետ, ապրելու իրարմով և զբայրութեան
կեանքը օտար այս երկրին մէջ: Բալորին
դէմքերուն վրայ կը կարգացուէր զգացուած
ուխրութեան մը խորունկ թախիծը:

Լացինք բուօրս ալ անապատի մեր խոր
վիշտը, տասնեակ տարիներով կուտակուած
ու ոչ մէկ կերպով սպիտացած, մեր մէկ ու
կէս միլիան հայ նահատակներու համատա-
րած ու բնդարձակ անջիրիմ գերեզմաննե-
րուն առջն կեցած Արքն ու լուսինը փոխն
ի փոխ կը հսկեն ու կուլան անոնց հողմա-
ցրիւ նշանաբներուն վրայ զով ու տաք ար-
ցունքներով ու երկինքի անհուն կառոյաթը
կը տաճարանայ անոնց չիրիմներուն վերև ։
Աստուած կը լսէ անոնց արդար արեան
բոզոքին ձայնը ։ Անոնք բոլորն ալ կենդանի
են իրենց մահուան մէջ, մենք ենք որ աշ-
խարի բոլոր զոիներուն մէջ ու պոզոտա-
ներուն վրայ պատառ մը ցամտք հացի հա-
մար ամէն օր կը մենոնինք անարգ մահե-
րով. ոչ մէկը պիտի զանուի մեր վրայ լս-
ցով, մեզ համար աղօթոզ ։ Անոնք երջանիկ
նահատակներ են որոնց համար աղօթք կը
մատուցանենք ու խունկ կը ծխնիք նոյնիսկ
աշխարհի այս հեռաւոր անկիւնը ։

Երբ այսքան անհամար սահմանադր
ունի ազգ մը, ան կենսունակ ու ապրելու
կոչուած ազգ մըն է: Նահատակներու ա-
րիւնը կ'ոռօգէ ու կը բեղմաւորէ ապագայ
սերունդներու կեանքը:

Ազգակիներու Օր: Աւատրալոյ այս շաբաթում առաջարկված է օրը կը համապատասխանէ ու կը զուգադիպի մեր Ապրիլի

24ի սգատօնին: Ապրիլ 25ին կը կատարեն
և Ապրիլ 24էն սկսեալ յիշատակի օր է
Աւստրալիացի և նոր Զէլանտացի այն նա-
հատակ հերոսներուն՝ որոնք ինկան Առաջին
Մեծ Պատերազմի ընթացքին կէլլապոլիի
ճակատին վրայ: Այդ նահատակներու յիշա-
տակին կուգան աւելնալ նաև Բ. Մեծ Պա-
տերազմին մեռնողներուն յիշատակը: Աւստ-
րալիոյ զիւզերէն ու մեծ քաղաքներու ար-
ուարձաններէն ստուար բազմութիւններ կը
հաւաքուին կեղրոնական մեծ քաղաքները՝
որոնք նահատակներ տուած են այս երկու
պատերազմներու ընթացքին: Հազարաւոր
մարդիկ կը զիշերեն Անձանօթ Զինուորի
յուշարձանին շուրջ օրերով ի յարգանս ի-
րենց նահատակ սիրելիներուն: Զինուորա-
կան տողանցքներ կը սարքուին քաղաքնե-
րու զիխաւոր պողոտաններուն վրայ, բոլոր
կրօնական և եկեղեցական յարանուանու-
թիւններու կողմէ ծաղկեպսակներ կը դըր-
ուին և կրօնական պաշտամունքներ կը
կատարուին Անձանօթ Զինուորի յուշարձա-
նին առջև: Պատերազմի վիքերանները այդ
օրը իրենց քաջութեան մետալներն ու պատ-
ուանչանները կախած իրենց կուրծքերէն,
ման կուգան քաղաքի փողոցները: Երթե-
ւեկը կը գժուարանայ, մինչև որ գաւառ-
ներէն եկող ժողովուրդը կամաց կամաց
վերադառնայ իր տեղը:

Այս տարի առաջին անգամ ըլլաւով,
մենք Հայերս ալ մասնակցեցանք այդ սգա-
հանդէսին, ծաղկեպսակ զետեղեցինք Ան-
ձանօթ Զինուորի յուշարձանին վրայ ու
կարճ հոգւոց մը արտասաննեցինք պաշտօ-
նապէս խուռան բազմութեան մը ներկայու-
թեան:

Հոգաբարձութեանս անդամներէն Տիար
վահան Հանէսեան քանի՞մը օր առաջ կար-
դադրեց պաշտօնական մարմիններու և ոս-
տիկանութեան պիտին միջոցաւ որ հայերս
ալ մասնակցինք Անզակներու Օրուան հան-
դէսին, մեր Հովհեին, մեր համայնքի ներ-
կայացուցիչներուն հետ, բերելով մեր հա-
մայնքին կողմէ ծաղկեպսակ մը:

Պատկան իշխանութիւնները սիրով ընդ
առաջ երթալով մեր փափաքին, Ապրիլ 25ին
ժամը 12ը 15 անց մեզի ժամանակ սահմա-
նած էին ներկայանալ հոն, կատարել մեր
պաշտօնունքը և զետեղել մեր ծաղկե-
պսակը: Այս առթիւ Պ. Հանէսեան յատկա-

ՏՊԱԿՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀՆԴԿԱՍՏԱՆԻՆ

Կալկարայի նայ եկեղեցիները
եւ զերեզմանառուները:

Դեկտ. 28ի առոտուն: Կ'արթիննամ աղ-
մուկներէ, քաշուող կառքերու անիւններու
ճոխնչէն, ճամոցներէն, թիթեղներու ճի-
չէն, որոնք աւելի ևս կը լայնան սենեան
կիս արձագանգներով: Հազարաւոր աղուաւ-
ներ կը լեցնեն հանդիպակաց տուններու
տանիքները և կ'ողողին մթնոլորտը իրենց
անախորժ կոխնչով: Երբեմն միախորհուրդ
կարծես թե կ'առնեն զորչ երկնքին վրայ որ
մերթ ընդ մերթ կ'անձընէ: Կալկաթայի
ամենէն հաճելի եղանակը որ Փետրուարի
կէսէն սկսեալ տասիճանական տաքութիւնը
մը Ապրիլի վերջներուն իր առաւելագոյնին
(115 Փարէնհայթ) կը հասնի, որմէ վերջ կը
սկսին մանունները, տեղատարափ անձրե-
ները, որոնք կպչուն, անտանելի, հասա-
րակածային ջերմութիւն մը կը ստեղծեն:
Այնքան տարբեր՝ այս երկիրը իմ ճանչցած-

պէս խնդրած էր որ մեր ծաղկեպսակը չի
զետեղեն թուրքերու ծաղկեպսակին քով,
ինչ որ մեծ զոհունակութիւն պատճառած
էր կարգադիր յանձնախումբի զիխաւորին և
խոստացած էր նկատի առնել իր մասնակի
խնդրանքը: Այս երկրին մէջ, թուրքերու
հանդէպ խորունկ տաելութիւն մը կայ.
Կէլլապոլուուի մեծ և ահաւոր ջարդին միծա-
գոյն գոհը տուած էր Աւստրալիան: Ճուն
չկար Աւստրալիոյ մէջ որ չունենար իր կո-
րուսոը այդ պատերազմի ճակատին վրայ:
Ամօր համար Աւստրալիացիները թուրքե-
րուն հանդէպ ունին անմար վրէժ ու յա-
ւիտենական սիս: Կը գտնուին շատ փոքր
թիւով թուրքեր, որոնք եկած են կիպրո-
սէն. Կ'ապրին հասարակ բանուորի կեանքով,
ընկերական ըրջանակներու մէջ կը ծածկեն
իրենց ինքնութիւնը, որովհետեւ զիտեն որ
Աւստրալիացիները չեն սիրեր զիրենք և
խորունկ տաելութիւն մը ունին իրենց
հանդէպ:

ԱԱՊՂԻԿ Ծ. ՎՐԴ.

Սիսնի, 20. 5. 55

ներէս, ուր տաքը, աղտոտութիւնը, խեղածութիւնը սակայն այնքան քաշողական բան մը ունին անոնց համար որոնք պիտի ուզեն համատարած փարթամութեան մը հիմքը կառուցանել:

Կը նայիմ պատուհանէն վար, Հայ Եկեղեցւոյ ըրջափակին հիւսիսային կողմը, Հայկական Փողոցը, վիստացող բազմութեամբը հնդիկներուն, որ կ'իրկարածգուի գէպի արևելք, հանդիպակաց փողոցէն ալ վերջ, իր ներ խողովակին մէջ տանելով հազարաւորներու հոսանքը: Գունագեղ խանութիւնիր բուսական ներկերու, թիթեղեայ ճամբորգական պայուսակներ շինողներու՝ որոնց տէրերը ծալլապատիկ նստած փողոցներու վրայ իրենց պէսպիսուն, զոյնզգոյն արանքները կը ցուցադրեն: Անմիջապէս կը մտածես նախնական ու պարզ մարզու ճաշչակին որ աչքառու գոյները կ'ընտրէ իրեն համար ու կարծես իր երկրին պէս որ արևէն կ'առնէ ծիսածանի բոլոր գոյները ու կը բաշխէ զանոնք այնքան հաճելի արուեստով մը ծաղիկներու և թոշուններու վրայ, իր ինքնուրոյն արուեստը կը յօրինէ: Կը յոդնին աչքերս գոյներէն ու կը զառնամ փողոցին ուր բոպիկ, սպիտակ կերպասներու մէջ փաթթուած մարդիկ սրսփառով, ծրաբուած իրենց վարչամակներուն մէջ կը քալեն թաց փողոցին վրայ: Մեզի համար հաճելի այդ ցուրտը, եթէ ցուրտ կարելի է կոչել զայն, կը զգաս թէ կը տարածուի անոնց մարմիններուն վրայ ու կը կծկէ գէմքերուն մկանները: Շատեր կը հազան, չոր հազը հիւսնգներու:

Ու պիտի չսիրես Հնդկաստան առաջին փորձառութեամբ, որուն երկնքին կապոյաւ անգամ ցիխոտ բան մը ունի իր մէջ և որուն միծ քաղաքներուն ճամբաները տարօրինակ նախնականութիւնն մինչև ամենաառուն քաղաքակրթութիւն մը ունի: Անոր համար հետաքրքրական թերևս, որովհետև հո՛ն հինն ու նորը այնքան ուժգնօրէն կը հակադրուին և սակայն այնքան անմիջականօրէն միասին են: Ինքնաշարժերու քովին ի վեր ուեւոներ, մարդամուղ կառքեր՝ որոնց լծուած մարդիկը իրենց գէմքին վրայ չունին ո՛չ մէկ կենդանութիւն և ուր տարիներու համբանքը այնքան շուտ կը բազմապատկուի: Ու տակաւին զոմէշներէ քաշուած կառքեր, որոնք զանդաղ,

յօրանջուն գնացքով տեղական գոյն մը կը ստեղծեն և թափառող կովերու և մարդերու մէջէն կարծեն յուիսունականութեան ճամբորգութիւնը կ'ընեն . . . : Ժպիտը, կեանքին անմիջական նշանը, կը պակսի բոլորին գէմքին վրայ: մինչ աշխարհ Ենիւրուի նմաններով կը ճանչնար հնդիկը, իմաստուն լաւատեսութեամբ մը առցուն, որ կ'արհամարնէ ամէն խոչընդուռ և դըժքախտութիւն: Անձանօթ լրջութիւն մը անոնց վրայ մտածել կուտայ ինձի այն տաժանքին որ իր կեանքով և պատմութեամբ գերագոյն և անհուն անէութեան — Նիւրվանայի — մասին խոկալ տուաւ հնդիկը: Թէ և քիչ մը կանուխ՝ ինձի համար ամբողջութեամբ տարրաւուծել անոր հոգեկան կառույցը: Բայց պիտի ճանչնար հանդարատութեամբ՝ որ կուգար իրեն կրօնքէն, պարտազրուած ամէն ինչէ՝ կիմայէն, ընկերային հասկացողութիւնն, նախապաշարութիւններէն, խեղճութիւնն, զարբերու բռնութիւններէն՝ որոնք Հնդկաստանը առին իրենց երկանաքարին տակ մարզով և հարստութեամբ:

Ո՛չ մէկ հայկականութիւն Հայկական փողոցի վրայ: Ժամանակին Եկեղեցին ըըրջապատող բոլոր տունները հայերու բնակարաններ են եղած և վարի խանութիւնները հայ գաճառականներուն: Քաղաքը հետքածետէ տարածուած է իր նոր թաղամասերով գէպի հարաւ ու հիւսիսային կալկաթան ամբողջութեամբ ձգուած է բնիկին, կարծես աւելի՛ և ս շեշտելու համար պանդղիստութիւնը հայ եկեղեցիին այդ օտար քաղաքին մէջ: 1707: 250 տարուան պատմութիւնը մը ունի ան, կալկաթահայութեան Մայր Եկեղեցին — Նազարէթայ Ո. Եկեղեցի, որ զորշացած ծհծող արեներէն, իր հազիւ զանգակատունով հայ ճարտարապետութիւնը յիշեցնող կառույցով, կը բարձրանարթ զամբաններ սալայատակին վրայ: Գիտարանարթ սեցաց սալայատակին վրայ: Պահանարթ զամբաններ սալայատակին քարելմանաւունը՝ որուն մէջտեղ կը բարձրանայ թեւատարած աղօթքի մը պէս եկեղեցին: ՄՄայր որդուովք իւրովք բերկուելք: Եըրջափակը ամբողջ փոքրիկ Հայաստան մը, զափակը ամբողջ փոքրիկ Հայաստան որ երեք գարերու անցեալի մը յիշողութիւններու կը զրգուէ միտքս: Հին Զուղան՝

որուն ճարտար, իմաստուն բնակիչները, աչքերնին միշտ ետ իրենց պապերուն ժառանգութեան՝ նոր Զուղայի ճամբով, ուր իրենց պակսեցաւ պարսիկի կրօնքին թոյլտըւութիւնը, հետան հնդիկին յարդալից, հանդուրժող ոգիին մէջ զործնականացնելու իրենց կարողութիւնները: Ու հսկայական ու տարածուն կալկաթայի մէջ, որ նախքան անգլիացին նուաճումը փոքրիկ գիւղաքաղաք մըն էր համբաւաւոր իր կալի չաստուածունիին կարով, ուրքէ և իր յորջործումը կալկաթա, հայը ևս պատուավ արձանագրած է իր անունը: Բանի մը հազարաւոր բնակչութեամբ զիւղը վերածուած է այժմ հինգ միլիոն բնակչութիւն հաշուող քաղաքի մը, ամենաբազմամարդը Հնդկաստանի քաղաքներուն: Առեւրական կեղուն՝ ուրքէ ճութի (վուշ) և լաքի և հնդկական համեմեներու մեծաքանակ արտածումը, Հնդկաստանի հարստութիւնը, Հուզիլի գետին միջոցաւ, Գանգէսի մէջ ճիւղը, կը բաշխէ աշխարհին: Այդ հսկայ հուզիկախն քանի մը հարիւր հաշուող հայեր, որոնք սպիտակ ցեղի պատկանելու բախտաւորութիւնը ունէին, աստուածներ անոնք Հնդիկին համար որ կը խոնարհէր անոնց անցքին առջև միամիտ հաւատքով մը, իրենց բազուկին, մտքին և առեւրական բնական ձիբքերուն մասնակցութիւնը բերին: Ու մեր պատմութեան հնդկահայը կերտուեցաւ, առասպելական հարստութեամբ, հրաշալի հայրենասիրութեան և բարերարութեան հոգիով զեղուն: Ու կը պառկին անոնք այս սալայատակին տակ պարզ և խոհուն հայ մտքին և հոգիին արժանիքները այնքան գեղեցկօրէն հանդիսաւորիէ ետք: Թագէսուներ, կրէտներ, Սրգարներ, Դաւթեաններ և Վարդաններ, բոլորը, աղքատն ու մեծաւորը: Առաջին օրերու գամբանազրերը զուտ հայերէն են, երկաթագիր գիրերով փորազրում, որոնցմէ ումանց վրայ Ազարիայի թուականովնչանակումներու կարելի է հանդիպել: Միակը, Զուղայի թեմը որ գործած է այդ տարեթիւը 1615 տարիներու նուազութեամբ մեր զործածական տարեթիւնը վրայ: Ժթ: դարու առաջին քառորդէն սկսեալ անգլիերէնն ալ կ'ընկերանայ անոնց՝ սակայն յառաջիկային աւելի հանգամանք ստանալով: Կան բոլորովին անգլիերէն արձանագրութիւններ ալ: Պատմու-

թիւնը հնդկահայութեան որ իր հայու մարմինն ու ոգին քօղարկած է անգլիացիին քղամիթով: Բայց հակառակ իր անգլիախուսութեան, հաճելի է զգալ խորունկ, տաք, թրթուուն հայեցիութիւնը որ կը բարախէ անոր հոգիին մէջ տակաւին: ու կը խորհիս ակամայ ոգեկան այն ուժին որ լիզուին նոյնութենէն ալ վեր ժողովուրդները կը լծէ յաւրահնական հասկացողութիւններու և հաւատաքներու նոյն արօրին, նո՛յն անցեալի ակօսներու մէջէն:

Կը փնտուեմ գերեզմանաքարերու արձանագրութիւններու վրայէն ծանօթներինծի: Արգարներ: Ժառանգաւորաց օրերուն անոնց շառաւիղէն՝ Օր. Էմի Արգարի հայկական պատարազը կը յիշեմ, այդ օրերու մեր սուութեամբ Զուղայի Պատարազը, որ իր անպէտ երկարածզումներուն մէջ չես զիտեր ինչ մը ունէր մեր հոգիէն, հայու հոգիէն, որ կուգար անցեալի խորքերէն, անոր պէտ պարզ, տառապազին և անիմանալի: Բանի մը անգամ լոեցի անոր երգեցողութիւնը նազարէեայ Ո. Եկեղեցիին մէջ, ամէն ամսու առաջին կիրակին Օր. Էմի Արգարի կտակով պարտազրուած, որ սակայն չտպաւորեց զիս իմ աշակերտութեան օրերու խանդավառութիւնով: Այն ոզին որ մենք զտած կը խորհէինք այն ատեն, ամբողջութեամբ զրեթէ պարպած էր այդ պատարազը ու համբերութիւն էր պէտք ծայրէ ի ծայր անոր ձայնանիշերու անորութեան յանձնելու մեր Աստուծոյն և մեր շաբականներուն անհուն քաղցրութիւնը: Թիրես անոր համար որ զեկավարողը օտար մըն էր, խառնածին մը, (Անգլիացիններու և Հնդիկներու խառնուրդներ ասոնք, որ քանի մը միլիոն են Հնդկաստանի մէջ և շինած ապօրէններու նոր ցեղ մը անվատահելի նկարազրով, ինչպէտ ըսուեցաւ ինձի, որ երբեմն անգլիական խարտեաչէն մինչև Հնդկական թուիսը տիպարներ կը ներկայացնէ: շատ անգամ համակրելի արտաքինով, բայց որուն կը պահոի ցեղային զրոշմը և յստակ անցեալի մը հիմը) որ երաժշտութեան ուսուցիչ կալկաթայի հայու Մարդասիրական ծեմարանին մէջ Էմի Արգարի պատարազին միայն երգեցութեան պարտականութիւնն ալ ունէր իր վրայ:

Ու կը քալեմ դամբաններու մէջտեղէն

հազիւ ոմանց հիւծած գիրերէն արտահաշելով գրութիւնը, որոնցմէ քանի մը հաստին տակ մէկ երկու եկեղեցականներ ևս կը պառկին։ Քանի մը քահանաներ միայն որովհետեւ նոր Զուղայն հերթապահի դըրավեամբ պաշտօնակալ քահանանաները միշտ վերադարձած են Յ տարի միայն քահանանայագործելէ վերջ Ս. Ամենափրկչեան Մայրավանքը, հոն սպասող ուրիշներու կարգ տալու համար։ Աղքատիկ նոր Զուղայն վերջ հարուստ Հնդկաստանի, Ինասոնիգիոյ, Պուրմանիայի գաղութները լաւագոյն և առատ ամսավճարներով իրենց եկեղեցականութիւնը գրեթէ ամբողջութեամբ նախանձելի դիրքի են հասցուցած։ Մենք ունինք մեր ուրիշ գաղութներու մէջ քահանաներու կեանքին օրինակը։ Աւրեմն և զարմանալի չէ որ նոր Զուղայի շատ մէծ ընտանիքներ քահանանաներու սերունդներ են։ Ու շատ հանդիպեցայ ես իմ այցելութիւններու ընթացքին լաւ դիրքերու վրայ թռոներու, զաւակներու քահանանաներուն, որոնք սակայն խորունկ հաւատքի և եկեղեցափակեցայ ես իմ այցելութիւններու վրայ։ Մեր աւանդութիւնները կարծես կը պահուին քահանանաներու ընտանիքներէն ներս՝ որոնց անդամները սրտեռանդն չերմեռանդութեամբ և հախանձայուղութեամբ կը կապուին անոնց։

Եւ քանի մը արքեպիսկոպոս նուրիակներ իշմիածնի, որոնք այդ օրերուն համար դժուար և տաղակացուցիչ, երկար ճամբորդութիւններէ վերջ իշմիածնին և մի՛շտ տառապող հայրենիքին լրաբերները եղան հեռաւոր այս գաղութին մէջ և ընդունեցին անոնց պայածառութեան համար սրտաբուղին նուերները անոր։ Հնդկահայուն համար — հասկնակով անոր մէջ ամբողջ Հնդկաստանի և հեռաւոր արևելքի հայ գաղութները — Ս. իշմիածնը տակաւին զգացական, խորունկ, համայնական հասկացողութիւն մը, աւելի հաւատք մըն է, որուն մասին ո՛չ մէկ տարակարծութիւն կը ներէ ան իր մտածումին։ Անոր իրաւ հայեցիութիւնը թերես պէտք է ալ փնտուել այս կեցուածքին մէջ երբ ոչ մէկ քաղաքական տեսութիւն բաժնած է անոր հոգին և խաչածեած իր սէրը իր եկեղեցիին հանգէալ ժողովութեամբ։ Առաջին մէր իրկիրը, ներկայ որոշ մասով ամէն մէկ հայու մէջ, մէր արդաւանդ գաշտերը, մէր ջինջ երկինքը, բարի հովիտները, գահավէժ և հեղասահ ջուրերը, անիփառ Մասիսը, վերջապէս մէր գարունն

անբացատրելի բայց ներկայ, որոնք իրենց ճակատագիրը դեկավարող ուժեր կը դառնան։ Իշմիածնը մեզի համար հայրենիքին բարախող սիրան է որուն մէջէն անցան դարեր ամբողջ մեր կեանքին, գոյութեան արիւնն ու աւիշը։ Մեր մահերուն մէջէն աւելի զեղեցկացաւ ան իր խորհուրդով, մեր յաւիտենականութեան խորհրդահանը իրք, ուր մեր ժողովուրզը ամփոփած էր իր անցեալի մտքին և հոգիին հրաշագործութիւնները։ Աւ յուղումով կը զգաս հնդկահայու բերնին վրայ քաղցրանալը անոր անունին։

Աւ կենդանի աշխարհ մը կը դառնայ հիմա ամբողջ այդ գերեզմանատունը, նըւիրակով, քահանայաց ու ժաղովուրդով մտքիս աչքին առջև։ Աւ կը տեսնեմ ժողովուրդին հրաւալից, համակ արցունք, չերմեռանդութեան աշխամբոյները որոնք նուրիակին համակ խունկ և բոյր փէշերու մէջէն հայրենիքը և իշմիածնը կը հուսութան։ Արքան բան կորսնցուցինք մեր հին օրերու հաւատքէն ու հեռուէն մեր զզզզուած խզմատանքին և չարչրկուած սրտին մէջ կը զգանք փլումին ճարճատիւնը անոր։ Մեր որակին շատ բան տուաւ մ'ր հաւատքը։ Աւ գժրախտութիւն՝ երբ քար առ քաղաքին առ շազախ կը բաժնըւինք իրարմէ, չիս գիտեր ո՞ր բարիքներու համար, որոնք սակայն անցեալին մեր ժողովուրդինը չեղան։ Աւ դարերով փորձարկուած, գարերով ոգի և մարմին առած, մեր ժողովուրդի արցունքով և արիւնով սրբազութեամբ մեր սրբութիւններուն կը նայինք հիմա մշուշու նայուածքներով, մեր հոգիին մէջ և սրտին նահանջը ամենուրեք։ Մինչ հօս, անոնք որ գիմացած են զարերու աւերին դէմ, զարձեալ հաւաքուած են իրենց մեռելներով իրենց եկեղիին շուրջ։ Կը պառկին անոնք օտարութեան մէջ, բայց մտերմութեան՝ հայ եկեղիի զանգակներու զօղանջներուն, շարականներու երգեցութեանց, խունկի բոյրերուն, իրենց փոքրիկ հայրենիքը ստեղծած ըլլալու գոհունակութեամբ։ Առաջին մէր իրկիրը, ներկայ որոշ մասով ամէն մէկ հայու մէջ, մէր արդաւանդ գաշտերը, մէր ջինջ երկինքը, բարի հովիտները, գահավէժ և հեղասահ ջուրերը, անիփառ Մասիսը, վերջապէս մէր գարունն

ու ձմեռը մեր հոգիին մէջ զբած են մաս մը իրենց բարութենէն, զգայնութենէն, կիրքերէն։ Անոր համար թերես եր օտարութեան մէջ հայու մը կը հանգիպինք, անմիջապէս կը պարզուի մեզ ճնշող թանձրութիւնը ուրիշին և կը չինհնք միտուին, երկու հոգիով, մեր երկիրը։ Հսկայ կալկաթային մէջ, նազորէթայ Ա. Եկեղեցին իր չըջափակով հայրենիք մը կը թուէր ինձ համար ուր և կար նաև ներկային յուսագրումներուն մէջ անցեալին ալ այնքան խորունկ աղերու։ Ճիշդ անոր համար որ ամեռելները կ'ապրեցնեն ոզջերջ։ Աւ կալկաթան կ'ապրէր ինձի համար խորունկ, հայկական կեանքով մը ուր կարծես իշխողները լլայինք մենք մեր իմաստութեամբ, մեր ներքին բոլոր ժառանգութիւններով համատարած այն բոլոր խիզ ճութիւններուն վրայ որոնք պատերէն դուրսի ձայներուն խուլ, անհասկնալի ելեն էջներով կը բազիսէին ականջիս։ Ամիսներ ամբողջ ու ամէն օր քիչ մը աւելի մտերմացայ այդ զամբաններուն որոնց բոլորին տակ հիմա կը պառկէին ինձի ծանօթ անձնաւորութիւնները, այնքան նոյն մէկը միւսին և բոլորը ինձի նոյն յոյսերը, նոյն հրճուանքը, նոյն տառապանքը, պանդխոտութիւնը հայուն օր ապրեցուց և կ'ապրեցնէ մեզ բոլոր մեր բոլոր բաժանումներուն մէջ, նոյն կեանքով։

Կը մտնեմ եկեղեցին ներս որուն աւագ դուռը կը բացուի զանգակատան չորս սիւներուն ներքին։ Կը յառաջանամ հաստ ու կարճ սիւնաշարքի մը մէջէն դէպի աւագ խորանը՝ օր ամբողջութեամբ արծաթազօծ, Տիրամօր և Արքույն մէլամազձուն նայուած քներուն տակ յաւիտենականութեան խորհուրդը կը հազին։ Հոգածու ձեռաքեր և սրտեր լեցուցած են զայն ոսկի և արծաթ բոլոր սպասներով։ Կը համբուրեմ Աւետարանը, սրտիս խորքէն աղօթք մը ըսելով, աւելի ապրելով մեր ժողովուրդին համար, ու հոգւոց մը բոլոր դուրսը պառկող մեր մեռելներուն՝ որոնք օր մը ինձի պէս նոյն խորանին առջև ծնրադրեցին ու համբուրեցին։ Մեր ժողովուրդի հոգին նուրէն։ Կը կրինեմ տուն առ տուն Վահան Թէքեանի սեղեղեցին Հայկականը, նոր օրերու մեր շարականը։ Կը դառնամ դիտելու շուրջու խոհանուած եկեղեցի մը, ու առ փայլուն աթոռներ որոնք շարուած

չերմեսանդ լրջութեամբ մը եւրոպական եկեղեցիի մը ներսի կարգադրութեան ձեր կը մատնեն։ Խերաքանչիւր աթոսի առջև ծունկի զալու համար թաւշապատ աթոռակ մը և գրակալին վրայ Ա. Պատարագի և Ժամերգութեանց զիրք մը ժողովուրդին մասնակցութեան համար։ Աչքս կը յածի պատերուն վրայ որոնք լոկ քանի մը մարտարեայ յիշատակարաններ կը կրեն, զըժքախտաբար մէծ մասը անզիփերէնով, բարերարներու և եկեղեցւոյ երսխտաւորներու մէծարանքին համար։ Աւագ զրան վրայ վիրնատառ մը պատշգամի ձեռվ զպիրներու երգեցութեան համար, ուրիէ ի հրճուանո ինձի այնքան գրաւչութեամբ տօնական օրերուն քառաձայն և պարզ կիրակիներուն միաձայն երգեցին զպիրները, աղջիկ և տղայ պատանիներ և երիտասարդներ, զեկավարութեամբ վիզիւնի, զստեր շատ սիրուած ազգայինի մը՝ Փիթըը Աւելքուի, որ իր ձայնին քաղցրութեամբ կ'աւելցըներ խորհուրդը մեր եկեղեցիին։ Դժուար է զապել արցունքը, երբ միայն անզիփերէն խօսող հայեր այնքան զրաւիչ, խօսուն, փոխանցիկ կը զարձնեն մեր եկեղեցւոյ սրբազն երգերը։ Ու անոնք կ'արձագանգին ամէն հայու հոգիին մէջ անցեալէն վիրազարձող քաղցրութիւններով։ Ու պիտի տեսնէք այդ եկեղեցին միշտ լեցուն հաւատացեալներով՝ որոնք անշշուկ, կիրթ կը հետեւ իրենց զիրքերուն վրայէն բոլոր երգեցութեանց։ ո՛չ մէկը որ չզզար վայրկեանին սրբութիւնը ու խանգարեր զայն իր ելեմուտքով և խօսակցութեամբ։ Օրինակիլի կարգապահութիւն մը որուն շատ քիչ կը հանգիպինք մեր վայրերու մէջ։

Քանի մը հին զամբաններ եկեղեցիին մէջ որուն երկու քովի թեները աւելի վերջ առնուած են եկեղեցիէն ներ։ Վերէն կը կախուին բազմաթիւ հոգահարներ և չէնքը ունի շատ մը զուռներ տաքերուն զէմ պայքարելու համար։ Շատ անզամ անիկա հազար տօնական օրերու ուրախ հանգերձանքը, երբ բազմութիւնը հաւատացեալներուն լեցուց զայն իր բոլոր զեղեցկութիւններով։ Այդ օրերը կենդանի ապրումներ կը մեան հոգիիս մէջ որոնք երբեմն կուգան իրենց թարմութեամբ և ուժգնութեամբ իմ հաւատքիս չէնքը նորոգելու։

Ուրիշ եկեղեցի մըն ալ կայ կալկա-

թաղի հարաւային թաղերուն մէջ որուն Փարք Սթրիթի Եկեղեցի անունը կուտան ընդհանրապէս և որ աւելի ուշ չինութիւն մըն է: Եկեղեցւոյ հիմնարկէքը կատարուած է 1905ին, Նոր Զուղալի Ամենափրկչի Վահուց մէծանուն Առաջնորդ Այվասեան Սըրբաղացացաւ: Կոկիկ եկեղեցի մը, բայց որ անզիւական եկեղեցիներու ճարտարապէտութեան ոճին զրութը կը կրէ: Մանաւանդ գուռներուն և պատուհաններուն գորիլ ձնը, կարմիր կղմինտրներու տղուոր չարքերուն մէջէն: Եկեղեցին ունի իրեն կից գերեզմանատուն մը ընդարձակ որ դարձեալ լեցուն, բայց այս անզամ եկեղեցւոյ շրջափակէն դուրս: Շաբաթ օրերու Պատարագները միշտ կը մատուցուին հոն և Մեծ Պահքի Հոկումները ևս աւելի մօտ

թղթալուն համար մեր ժողովուրդի բնակած թաղերուն: Եկեղեցւոյ աջ կողմը կը կանգնի բոլորովն նորաշէն ԱՄբ Փօլ Զէթըրին շէնքը հայ աղքատ ծերերուն համար յատկացուած, որուն բացումը ըրի ես գեղեցիկ ողեկումներու մէջէն:

Ուրիշ երկու գերեզմանատուներ ալ ունի Կալկաթահայը: Մին քաղաքին հիւսաւային մասին մէջ որ լեցուն է և հիւմանգործածական և միւսը Տինկրայինը դէպի արեելք որ ընդարձակ է և այժմու գործածականը և ունի փոքրիկ մատուռ մը թաղմանական արարողութեանց համար միայն յատկացուած: Բոլորն ալ ունին հոգատար հայ ընտանիքներ որոնք անցեալի ոյդ աւանդները կը պահին կարելի մաքրութեան և պայծառութեան մէջ:

ԲԱՐԳԻՆ ՎՐԴ.

ԱԿՐՈՐԾԱԿԻՐ ԱՐԱՄ ԱԷՐԱՅՑԱՐԵԱՆ
(1874 - 1955)

Զորեքչարթի, 17 Օգոստոսի առաւօտուն, իր յաւիտենական հանգիւուը մտաւ Ա. Աթոռոյս տարէց աշխատաւոր Միաբաններէն Ռւբարակիր Արամ Աէրայցարեանը, որ ատենէ մը ի վեր հիւանդագին վիհակի մէջ կը գտնուէր:

Հանգուցեալը ծնած է Մարտ, 1874ին: Ա. Ռւբարիս ծառայութեան մէջ մտած է 1936ին որպէս աշխատաւոր Միաբան: 1946ին, Երանաշնորհ Տ. Կիւրեղ Պատրիարքէն ստացած էր Ռւբարակութեան ատենքնան:

Տիրացու Արամ Ա. Աթոռոյս մէջ 19 տարիներու իր ծառայութեան շրջանը անցուցած էր ի Ա. Յարութիւն, տարիներ շարունակ կատարելով է Լուսարարի պաշտօն:

Թաղման արարողութիւնն կատարուեցաւ Նոյն օրը կէսօրէ վերջ, Մայր Տաճարին կից՝ Ա. էշմիածին մատրան մէջ, Նախագահութեամբ Քեր, Տ. Սուրէն Եպոս, Քէմհանեանի և ի Ներկայութեան բագանզակ Միաբանութեան: Մարմինը ամփոփուեցաւ Զամթաղի գերեզմանատան մէջ:

Հանգուցեալը իր ետին կը ձգէ ծառայանէր ու հեղահամբոյը Միաբանի մը բարի յիշատակը:

Հանգիստ իր հոգիին:



ՀԱՆԳԻՍ

ԳԵՐ. Տ. ՌՈՒԲԷՆ ԱՐՔԵՊՈ. ՄԱՆՍՈՒԵԱՆԻ



10 Յուլիս, Կիրակի զիշերուան ժամը 2.30ին, իր յաւիտենական հանգիստը մտաւ Ս. էջմիածնայ Մայր Աթոռոյ Միաբան Գեր. Տ. Ռուբէն Սրբեաս. Մանասեան, որ վերջին չորս տարիներուն, հիւրաբար կը զտնուէր Ս. Աթոռ :

Հանգուցեալ Սրբազնի մահը, հակառակ եօթանասունը անցնող իր յառաջացեալ տարիքին, անակնկալի բերաւ Ս. Յակոբեանց Միաբանութիւնը, վասնզի նորին Սրբազնութիւնը տակաւին առողջ էր եւ որեւէ հիւրանդութեան նշան ցոյց չէր տար :

Գեր. Տ. Ռուբէն Սրբեաս. Մանասեան ծնած է Երեւան 1882ին, նախ նական կրթութիւնը ստացած է Երեւանի ծխական վարժարանին մէջ, ապա աշակերտած է Ս. էջմիածնի Գէորգեան ձեմարանին : Շրջանաւարտ ըլլալէ ետք, մասնաւոր հակում ցոյց տուած է Երաժշտութեան հանդէպ : Ձեմարանի Տեսչութիւնը ուզելով գնահատել իր յառաջդիմելու նիզը, զրկած է զինք Մոսկուայի Երաժշտանոցի եռամեայ դասընթացքին, զոր աւարտած է յաջողութեամբ : Իր ուսանողութեան շրջանին իսկ կազմակերպած է երգչախումբ մը, Մոսկուայի Լազարեան ձեմարանին մէջ :

1911ին Գէորգ Ե. Կաթողիկոսի ծննդամբ ծննդապրուած է կուսակրօն քահանայ : Այսուհետեւ իր վարդապետութեան զքանին վարած է պատասխանատու պաշտօններ :

Հանգուցեալ 8. Խուըէն Սրբապս. նշանակուած է Հիւսիսային Կովկասի Սռաաշնորդ. ապա Գիրագոյն Հոգնուոր Խորհուրդի անդամ ու վարած է զանազան պաշտօններ իշմիածնի մէջ :

Որպէս Կաթողիկոսական Լիազօր Նուիրակ, զրկուած է Մահուերիա և Հեռաւոր Սրբւելք, ինչպէս նաև Սիափերիա, կարգ մը վէճնը կարգադրելու և Ս. Էջմիածնի ի նպաստ հանգանակութիւն կատարելու:

Հանգուցեալ Սրբազնը իրեն վստահուած քոլոր գործերն ալ կատարած է մասնաւոր ձեռնիհասութեամբ, Կորովով և յաջողութեամբ:

1928 ին ծեռնադրուած է Նպիսկոպոս, Ն. Ս. Օծութիւն Կէորդ Ե.
Կաթողիկոսի ծեռամբ : 1929 ին որպէս Առաջնորդ կը զրկուի Իրաք (Պաղ-
տատ), ուր կը մնայ մինչև 1944 : Գեր. Տ. Եփրեմ Տոնմունի Սրբազնի
վախճանուումէն ետք, կարծ շրջանի մը համար կը վարէ Դամասկոսի Կա-
թողիկոսական Փոխանորդի պաշտօնը եւ դարձեալ կը վերադառնայ Պաղ-
տատ, անպաշտու կերպով : 1951 ին եկաւ Երուսալէմ, հիւրաբար, եւ մնաց
Ս. Յակոբեանց Միաբանութեան մէջ հարազատ Միաբանի մը պէս : Ս. Յա-
կոբեանց Մայրավանքի մէջ իր քառամեայ բնակութեան ընթացքին, Նորին
Սրբազնութիւնը աշխատեցաւ իր կարողութեան սահմանին մէջ : Երբեմն
կը նախագահէր եկեղեցական թափօններու, արարողութեանց եւ հանդի-
սութիւններու : Երջան մը կազմակերպեց նաև քառաձայն Պատարագի
երգչախումբ մը, եւ այս չորս տարուան ընթացքին կարելին ըրաւ որեւէ
ծեռու օգտակար բլլալու Առաքելական մեր Ս. Աթոռին :

Զանգուցեալ Տ. Ռուբէն Արքապս. քծախնդիր եկեղեցական մըն էր,
ու իր քծախնդրութիւնը երբեմն կը հասցնէր ժայրայեղութիւններու։ Նա-
խանձախնդիր էր նաև եկեղեցական նուիրապեսութեանց հանդէալ։ Իրեն
համար նուիրականութիւն մը ունէր եկեղեցականի հանգամանքը։ Իր հան-
գամանքով եւ բարձրաստիճան եկեղեցականի իր շնորհներով հմայք
պատկառանք կ'ազդէր իր շուրջը։ Իրմով անդարձ կերպով կը մեկնի Մայր
Աթոռոց Ս. Էջմիածնի Միաբանութեան վիրջին շառակիցներէն մէկն ալ,
իր ծանօթներուն եւ բարեկամներուն զգելով շնչող, ընկերական եւ բարի
իր սովորութիւնները։

Հանգուցեալ Սրբազնին հոգուոյն համար 11 Յուլիս, օրվուշաբեր առաւոտ Ս. Յակոբիանց Մայր Տաճարին մէջ մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ որու Ընթացքին կատարուեցաւ վերջին օծման կարգը։ Պատարագեց Հոգ. Տ. Հայկազուն Վրբ. Արքահամեան, իսկ Գեր. Տ. Սուրեն Եպու։ Քչմիհանեան կատարեց վերջին օծումը եւ խօսեցաւ դամբանական քարոզ մը, վեր հանելով հանգուցեալ Սրբազնին արժանիթիները։ Ներկայ էր բովանդակ Միարանու Թիւնն ու բարեպաշտ ժողովուրդի խուռն բազմութիւն մը։ Ս. Պատարագի աւարտին կատարուեցաւ թաղման կարգը, նախազահութեամբ Գեր. Տ. Սուրեն Արքազնին։ Մայր Տաճարէն մինչեւ իր հանգստեան վայրո՛ հինգ տեղ կատարուեցաւ բահանայաթ աղի արարողութիւնը։

վայրը՝ հիսկ տաղ զամանակ՝ յանուն Ս. Յակոբոսաց օքանակ
«Սիոն» այս տիխուր առիթով, յանուն Ս. Յակոբոսաց օքանակ
թեան եւ անոր պիտին, Գեր. Տ. Եղիշէ Արքեպատ. Տէրտէրեանին, կը վշտակցի
Ս. Եջմիածնայ Միաբանութեան, Հանգուցեալ Արքազանի անդառնալի Կո-
Ս. Եջմիածնայ Միաբանութեան, Հանգուցեալ Արքազանի անդառնալի Կո-
ստուտին համար, եւ կը հայցէ Ս. Հոգին միսիթարութիւնը անոր պարա-
գաներուն, եւ կ'աղօթէ որ Տէրը նոր եւ քաջարի հովիւներ յարուցանէ Իր
ու Անդառնալի:

Ա. Եկեղեցին : Խունկ և աղօթք իր յիշատակին .

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

ԵԿԵՂԵՑՈՒԹՅՈՒՆ - ԲԵՄԱԿՈՒՅՆ

● Կիր. 7 օգոստ. — Ս. Պատարագը մասուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր յերեսամատրան մէջ։ Ժամարարն էր Հոգ. Տ. Վարուժան Վլրդ. Դասարաննեան։

● Կիր. 14 օգոստ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակով։ Պատարագից Հոգ. Տ. Ջաւէն Վլրդ. Զինչիննեան։ Ս. Պատարագէն ետք, Գեր. Տ. Սուրբէն Եպո։ Քէմհաճեանի նախագահութեամբ կատարուեցաւ Հանգողունէնք։

● Կիր. 21 օգոստ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակով։ Պատարագից Հոգ. Տ. Ջաւէն Վլրդ. Արքային Ապօ. Պատարագէն ետք, Գեր. Տ. Սուրբէն Եպո։ Քէմհաճեանի նախագահութեամբ կատարուեցաւ Հանգողունէնք։ Պատարագը մահուառներին առթիւ։

● Ուր. 26 օգոստ. — Ալազուան նախառանիկը արշտուեցաւ ի Ս. Էջմիածին, նախագահութեամբ Գեր. Տ. Սուրբէն Եպո։ Քէմհաճեանի

● Եր. 27 օգոստ. — Տօն Ծոփակարի Ս. Էջմիածինութիւնը ինքնաշարժերով մէկնեցաւ Գեթսեմանի պարտէղը ու բիշ ետք չըաշափառով մտաւք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւն, կիրակմատք և Հանգողուառը նախառանակալ։

— Էկարէ ետք ժամը 3.30ին, գիւղաւորութեամբ Գեր. Տ. Սուրբէն Եպո։ Քէմհաճեանի, ամբողջ Միարանութիւնը ինքնաշարժերով մէկնեցաւ Գեթսեմանի պարտէղը ու բիշ ետք չըաշափառով մտաւք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւն, կիրակմատք և Հանգողուառը նախառանակալ։

— Երիկնագէմին, Գեր. Տ. Սուրբէն Սրբազն նախագահունց և Եկեղեցէնի, Հակոբէնի և առաւտուեան ժամերգութեան։

● Կիր. 28 օգոստ. — Վեհակիմություն Ս. ԱլՍՈՒԱՌՈՒՅՆԻ։ Առաւտուեան ժամը 9ին, Գեր. Տ. Սուրբէն Եպո։ Քէմհաճեանի գիւղաւորութեամբ Միարանութիւնը երեկոյեան կարգով մէկնեցաւ Գեթսեմանի պարտէղը ու կէս ժամ ետք չըաշափառով մտաւք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար։ Ս. Պատարագը Ս. Կուսէի յերեկոյեանին վրայ Հանգողուառուացէն մատոյց և քարոզցեց Գեր. Տ. Սուրբէն Եղո։ Քէմհաճեանի, անդրագառնարով կնոջ կատարած դերին, բոլոր ժողովուրդներու մօտ Հին Կուտարանին մէջ եսթեր, իր ազգին բախտորոշ մէկ պահուն վրիկարար դեր մը կատարեց։ Ս. Օգոստինոսի դարձի բերովը իր մայրն է եղած։ Մենք ալ ունեցած ենք Քրիստոնէութեան համար մարտիրոսացած որբուհներ։ Առ պատմել ետք Տիրամօր ննջան ու վիրափառման աւանդութիւնները, յորդորեց Հոյ մայրերը որ ընթանան Ս. Կոյսի օրինակով։ Ըլլալու համար

անոր նման տիզար մայրեր՝ որոնք դիմուան առաջնորդել իրենց զաւակները զէօրի բարին, կատարեալն ու զեղացիկը։ Ս. Պատարագէն ետք, Գեր. Արքազանը նախագահունց և Անդասաններ։

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Անդասաններ, նախագահունց ետք, Գ. Նորայր Արքազանին։ Ազա երեկոյեան ժամերգութիւնը նախատօնակի որոնց կը նախագահունց Հոգ. Տ. Հայկազուն վրա։

● Բ. 29 օգոստ. — Յիշատակ մետեցցից Ս. Պատարագը ի Ս. Գլիխագիր մատոյց Անթիւիակ Միարանութիւն Հրաբրար Ս. Աթոռ գտնուող Հոգ. Տ. Ներսէն Արզ. Փաղու Ճեան Ապա, Գեր. Տ. Սուրբէն Եպո։ Քէմհաճեանի նախագահունց ետք կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն, նախա Մայր Տաճարին մէջ, առա գաւիթթը՝ Երանաշնորհ Տ. Կիրիկի Ս. Պատր. Հօր շիրմին վրայ, ինչպէս նաև Զամբաթաղի գերեզմանավայրին մէջ։ Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ նաև Հանգիստուր Հոգեհանգիստ, Ս. Աթոռոյ բարերար վաճեմ, Պատրիստ կիւրպէնկեանի հոգուոյն համար, անոր մահուան քառասունքին առթիւ։

ՊՈ. ԾՈՅԱԿՈՒՅՆ

● Ուր. 12 օգոստ. — Կէսօրէ ետք, Հոգ. Տ. Ջաւէն Վլրդ. Զինչիննեան, որ ամիսէ մը ի վր Սիւրբաւ-Լիքրանան կը գտնուէր, ժառանգաւոր վարժարանին համար նոր աշակերտներ արձանագրելու պաշտօնութ, վիրագարձաւ Ս. Աթոռու Հայր Սուրբը Սիւրբաւ-Լիքրանանէն 10 նոր աշակերտներ բերաւ։ իրեն կը ընկերանար Հոգ. Տ. Կիորդ Արզ. Նազարեան, որ Մայրի 31ին մեկնած էր իրան։

● Եր. 13 օգոստ. — Կէսօրէ ետք, Արք Տիկնանց Միւսութեան Պազարին ներկայ գտնուեցան Գեր. Տ. Սուրբէն Եպո։ Քէմհաճեան և Տիրա Կարպու Հինդիեան։

● Եր. 14 օգոստ. — Կէսօրէ ետք, Ժանօթ ճարտարապետ և Աթոռոյ բարեկամ Տիրար Մ. Ալթուննեան Ս. Յարութեան Տաճարի նորոգութեան առնուութեամբ Գէյրութէն ժամանեց Ս. Աթոռ և վիրագարձաւ Եշ. 25 օգոստոսի Կէսօրէ ետք։

● Հշ. 24 օգոստ. — Կէսօրէ ետք, Ֆրանչիսկանց Կիւսութասին կողմէ, Ambassador Hotelին մէջ, ի պատիւ Ս. Յարութեան Տաճարի նորոգութեան համար ժամանած իրենց խորեզական-ճարտարապետներուն արուած ընդունելութեան ներկայ եղան Գեր. Տ. Սուրբէն Եպո։ Քէմհաճեան, Հոգ. Տ. Հայրիկ Վլրդ. Ասլանեան և Տիրա Կարպու Հինդիեան։

● Ուր. 26 օգոստ. — Կէսօրէ ետք, Անթիւիակի Սիւրբաւ-Լիքրէն Հոգ. Տ. Ներսէն Արքայի Պատարագունի հիւրարար ժամանեց Ս. Աթոռ։ Փաղու ճեան համար օգակայան զացած էր Հոգ. Տ. Վազգէն Արզ. Գլուխարական։

● Բ. 29 օգոստ. — Կէսօրէ ետք, Անթիւիակի Սիւրբը, որ Յօնենի 10ին մեկնած էր Եւրոպա, վիրագարձաւ Ս. Աթոռ։ Գիմաւորութեան համար օգակայան զացած էր Հոգ. Տ. Վազգէն Արզ. Գլուխարական։

Հ Ա Ն Ի Կ Հ Ա Յ Ա Գ Ր Ա Բ

Գանիմէի մէջ, 15 Յուլիսի Աւրար օրը, իր մանկանացուն կնօքած է Բարեգործականի Եղիպատուի Մասնաշխիք երթինի Ասեճայիկ Խեծ. Տիար ձանիկ Զազրէ: Այս ժամու առլորդի, «Այսու», յանուն Պատը. Տեղապահն է. Տիարագանին, իր ցաւակցութիւնները կը յարնէ հայ իրականութեան մէջ վասակաւոր գործի Տիար ձանիկ Զազրէի պարագաներուն:

Ասեճայրական նօրեր

Ենած է 1879 Յունիսի 1ին, ի հ. Պոլիս: Մշրուուած է էկէնի - Գավուի եկեղեցիին մէջ, Հայկ անունով: իր մէսուղքին եօթք զաւակներուն բնիփամինը, զինքը փաղաքական մասնիկ անունով կոչած են տան մէջ; և այսպէս վերացիրը իսկական անունին տեղը բռնած է:

Իր հայրը իրաւուց 2ազգը ողլու Մարտիրոս Համբարձուման անունու կարսկաստանէն է. Պոլիս վրա խաղուուած ընտանիքի մը շառաւիդէն էր որ ամսւանացած էր ի. Պոլսեցի Շահնի - ծնեալ Ռափայէլան - հետ, որ աշխատունակ տանտիկին մըն էր, նուիրուած իր եօթք մանչ զաւակներունամած ութեան:

15 Յունիսի 1900 ին շըջանաւարտ կ'ըլլայ մուգէրթ գուէնէն Պատկաւոր Արուեստից տիտղոսով և չչողեր Պոլիս մալ, անշուշտ տիրող ճնշիչ մթնուղութիւն մէջ ապրելու կարելիութիւն չտեսնելով կամ նախա սղզացումը ունենալով տիսուր ապազայի մը:

Իր եղբայրը, ժանօնի տպարանատէր Անրիիչին, որ պետական շըջանակներու հետ ընդարձակ գործառութիւններ ունէր, իրեն կ'առաջարկէ իր մեծ հաստատութեան տնօրէնութիւնը և զայն համացել կ'աշխատի որ միայ է. Պոլիս, սակայն ճանիկ Զազրը անզրգութիւնի կը մնայ իր որոշումին վրայ և Եղիպատոս կուզայ 1900 նոյեմբերի 10ին, և նեկտեմբերին կ'ընդունուի Ալիքն Արմէազային ընկերութեան պաշտօնէութեան մէջ և 1 Յունիսար 1901 ին կը ձեռնարկէ գործի, համեստ պաշտօնութիւն մը: - Շուտով գնահատուելով, 1902ին ընկերութեանը զինքը պաշտօնով կը փոխադրէ ի. Պոլիս, սակայն Համբարձուական կառավարութիւնը շարտունի իր թուրքիա մատուքը և ետ կը զայնէ: Ընկերութիւնը զինք այս անզամ կը դրէկ հումախաւ ուր Գրինստիդի և Նափուի կը մնայ չորս ամիս ամառը, և ձեռը կը դառնար Եղիպատոս: - 1903ին ամառը զարծեալ Եւրոպու կ'անցնի պաշտօնով: 1904 ին կը փոխադրուի Փարէի Ընկերութեան շարժման ճիշդին մէջ զործելու համար և այս առթիւնու կ'այցեցէ 1905 ին Ֆերմանիա: - 1905 ին ձեռը նորէն Եղիպատոս կուզայ և նոյն տարին, կ'անոնի Ընկերութեան շարժման վարիչ և 1907 ին Փախ-Տնօրէն, իսկ 1925 Յունիսարին Եղիպատոսի և Պաղեստինի Ընդհանուր Տնօրէն:

Վակին Ալի գործառնութեանց շըջանակը չնորդիւ իր նախաձեռնութեան, ընդարձակուեցաւ և 1927 ին ինք Նշանակուեցաւ Ներկայացուցիչի նոյն ընկերութեան Սուրբոյ, Իրաքի և Պարսկաստանի ու յաջողեցաւ կազմակերպել մահճարած վակուններու սպասարկութիւնը 1921 ին Պաղեստինի, 1923 ին Սուրբոյ և Թուրքիոյ, 1928 ին Իրաքի և 1930 ին Պարսկաստանի մէջ, ուշագրաւ յատինի, 1933 ին Խալական կառավարութիւնը Սուրբական Արքանեաց, և 1934 ին Պուլկար թանգ, իսկ 1933 ին Սուրբական կառավարութիւնը Սուրբական Արքանեաց, և 1934 ին Պուլկար թատօռութիւնը Պուլկար Քաջաքային Արքանեաց Ազգային Անձնի, 1935 ին Եռէտական կառավարութիւնը Եռէտական Արքայական Թագի Աստղի Ասպետական, և 1937 ին Լիբանանի Հանրապետութիւնի առկի շըջանանով պատուած են զանազան առիթներով:

Բազմաթիւ Եւրոպական կառավարութիւններ զինք պատուած են զանազան առիթներով: Այսպէս, 1929 ին Ֆրանս, Հանրապետութեան Պատուած Լէկէնքի Ասպետական, 1930 ին Պետական Թագի Հայաստանի Թագի Հայաստանի Թագի Հայաստանի Պատուած Եւրոպական Թագի Հայաստանի Թագի Հայաստանի Պատուած Եւրոպական, 1933 ին Խալական կառավարութիւնը Խալական Թագի Հայաստանի Պատուած Եւրոպական, 1935 ին Եռէտական կառավարութիւնը Պուլկար Քաջաքային Արքանեաց Ազգային Անձնի 1937 ին Լիբանանի Հանրապետութիւնը Լիբանանի Արքանեան առկի շըջանանով պատուած են զինքը:

Ճանիկ Զազրը, Հայմանակի մէջ միջազգային զէմք մըն էր որ իր զիքին բերմամբ յարաբ-ըսւթիւններ ունէր պետական բարձրագոյն պաշտօնատարներու ինչպէս նաև զիւանազիտական ներկայացուցիչներու հետ, և անզամ էր միջազգային շատ մը ընկերութիւններու և միութիւններու: - 1925 ին սկսած կը վարէր պատուակալ ընդհ. Քարտուլարի պաշտօնը Զբոսաշըջապահին ներկերութեան, որուն նախազան էր Սիւէլչյան փաշա, իսկ 1926 ին ի վեր անզամ էր Եղիպատոսի Պանդոկներու Ընկերութեան վարչական խորհուրդին:

Ճանիկ Զազրը, Հայմանակի մէջն է Գանիմէի Միջազգային - Ռոթարի - Ընկերակցութեան և կարեւոր անդամներէն Քրիստոնեայ Ընկերութեան, որուն նախաձեռնողն էր թեառ և կարեւոր անդամներէն Քրիստոնեայ Ընկերութեան Միութեան, որուն նախաձեռնողն էր Պղրացաւ Պատուած Տիլա Եղիպատոսի Ընկերութեան պատուական զեսպանը:

Ճանիկ Զազրը ունէր նաև ազգային գործունէութիւն մը, անշահախղիք, և լո՞յախոն հայում մը վայել, և հեռու ցնորական գաղափարներէ ու անիրականալի երացներէ: Ընդհանուական, անիկա թիւ բարյական և նիւթեական աշակցութիւնը ընծայած է այս թուրք ձեռնարկերուն և գործերուն իր բարյական և նիւթեական պատուած մէջ ազգային իրական օգուտ մը կը տեսնէր և անոր ներկային ու պաղային բարօրութեան նպաստ մը ընծայելու հաւասարիք մը: Առաւելապէս անիկա բարեկամ էր զպրոցներու և

մառարական զարդացման : — 1912ին անդամակցած է Ազգային Գալուստեան վարժարանի Հոգաբարձեան, երբ Մինաս Շալեան կը վարէր անոր անօրէնութիւնը :

1919ին Քաղ. Ժողովը իրեն պաշտօն տուած է պատրաստելու ծրագիր մը Առաջնորդարանի վերակազմութեան համար, անոր հնօրեայ վարչութեան մեջ Եւրոպականացնելու մտապրութեամբ :

Այ ծրագրին համաձայն, որ խնամեալ զործ մըն էր, Առաջնորդարանը պիտի ունենար Ընդէւնքն մը, զոր նոյնինկ մնտուել փորձուած է լրազրական ծանուցութիւրով, սակայն յետոյ մասցութեան տրուած է, և այսպէս անգործազրելի մնացած է ծրագիրը :

1923 Ապրիլ 29ին Կ'ընտրուի Երեսփոխան առաւելազոյն քուէով, և այս թուականէն ի վեր քանի մը անզամ որ վիճակով դադրած է, կ'երընտրուած է : 1924ին հազիւ մէկ տարի եղած էր իր երեսփոխանութիւնը, երբ Քահիրէի թեմական ժողովի Առաջնորդուեցաւ և այդ օրէն մինչեւ 1934 անընդհատ բոլոր նստաշրջաններուն միաձայնութեամբ վերընտրուած է, իր անժխտելի ձեռնահասութեան և պաշտօնին պահանջած անկողմանաւթեան համար : — Իրեն վիճակուեցաւ մօտաւորապէս անցնող քառորդ զարու ժամանակամիջոցին Ասենապետել թեմական և համազումար ժողովներու բաւական վարչուակալից նույնութեան : Նկատելի է որ Կոստահյութիւններ, իրենց բարի սովորութեամբ, չեն կրցած սպառնալիքով կամ որեւ խառով մը զինք դործիք ընել :

Ճանիկ Զագըր մին էր Եպիստոսի հայ Հասարակութեան ամենէն աչքառութիւններէն, որ իրը ժողովուրդի զաւակ, կը սիրէր հայ ժողովուրդը և իր կարելին Կ'ընէր անօր համար :

1935ին Կաթողիկոսական լիազօր նուիրակ Գարեգին Արքապիսի : Յովսէկիեանցի առաքելութեան իր ընծայած թէ նիւթեկան և թէ բարյական ձեռնուուութեան համար, ինչպէս նաև Եղիպատողիկոսի, նուիրակ Արքազանը իրեն տուաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ պատուանշանին Ա. աստիճանը : — 1945ին երբ վեհ. Տ. Գարեգին կաթ. Յովսէկիեանց, Ամերիկայէն Եղիպատուանշանեց, Ճանիկ Զագըր Ն. Ս. Օծութեան ամենէն մեծ նեցուկը եղաւ, Վեհափառի Անթիլիսարի մէջ կատարելիք դործին հասկացողութիւնը և գիտակցութիւնը ունենալով, և սատարեց Կիլիկիոյ Աթոռին վերաբուժեան զործին ամէն կերպով ձեռնուու և աջակից գտնուելով անոր :

Եղիպատուանշայց նստատը, Ամերիկանայց բերած օգնութեան հետ, մեծ քաջալիբանք մը եղաւ վեհ. Տ. Գարեգին կաթողիկոսին, Անթիլիսար զարձնելու համար հայ մշակոյթի կեղուն մը և վառարան մը : Վեհ. Տ. Գարեգին կաթողիկոսի անձին մէջ անիկա զնահասուած էր ոչ միայն իմաստունին հոգեւոր պետի մը յատկանինինը այլ նաև ստեղծագործ աշխատանքի մարզը և մեծ մատուցականը : — Ասոր համար թէ նիւթեական և թէ բարյական ձեռնուու եղաւ անոր : 1945 Ապրիլ 8ին զնաց Անթիլիսա և Ներկայ եղաւ կաթողիկոսական օժման հանդէսին և կրկին քաջալիբեց կաթողիկոսը : — Նոյն տարին իրը պատգամաւոր Եղիպատութիւնին զնաց Հայաստան և մասնակցեցաւ համազային հոգեւոր ընդէւնք ժողովին և մէկն : Տ. Գրիգոր կաթողիկոս Հէօրէքն անի մինչ 1945 թ. 22 Յունի 1945 : — Ճանիկ Զագըր, այդ պատկանելի ժողովին նախագանձներէն — Ասենապետ մին եղաւ և կը ըստի կերպով վարեց ժողովը, օրինական սահմաններու մէջ, և խորհրդարանական սովորութիւններու համաձայն :

Ճանիկ Զագըրի ազգային զործունէութեան վրայ երբ կը խօսինք, չենք կրնար մոռնալ իր աշխատութիւնը զոր ընծայած է շայիկ : Բարեգործական Ընդէւնք, իրը հաւատաւոր մէկ անդամը այդ մեծ կազմակերպութեան, որուն զոյտութիւնը բարիք մը կը նկատեր այս ազդին հատեարար մասնակցած է անոր զանազան Յանձնաժողովներուն և Նախարար պատուարազմի միջոցին զործն զեր մը կատարած է Հ. Բ. Բ. Միութեան մէջ, այնոքն որ 1916ին Փախ-Անդամ ընտրուած է Կեղունական վարչութեան որ այն տան Գահիրէ կը զտնուէր : — 1921ին երբ Կեղունը գոյաւառութեամբ, Ճանիկ Զագըր կը պատգամաւոր անդամ անզամ անոր և պահէց իր պաշտօն մինչև 1932: Այդ թուականին երբ վերակազմուեցաւ այս Յանձնաժողովը ինք Բ. Բ. Միութեան Եղիպատուի կեղու : Յանձնաժողովնի կեղու Յանձնաժողովնի կեղու պատուիրակ, երբ 1945ի վերընը լի Եղիպատու վերաբացաւ կեղունական Յանձնաժողովնի, ինք եղաւ նախ անոր Փախ-Անդամական մասնակցեցաւ, մինչեւ իր մահը :

Հ. Բ. Բ. Միութեանը իրը մեծ կազմակերպութիւն իրեն համար էր Նուիրական հաստատութիւն մը որուն մասին ունէր զուրգութեանք և խոհամիտ զործունէութիւն մը : Ինք մէկն էր անախագանձնութիւնը կը վարէր մինչեւ վերջերս :

Հ. Բ. Բ. Միութեանը իրը մեծ կազմակերպութիւն իրեն համար էր Նուիրական հաստատութիւն մը որուն մասին ունէր զուրգութեանք և խոհամիտ զործունէութիւն մը : Ինք մէկն էր անախագանձնութիւնը կը վարէր մինչեւ վերջերս :

ՅԱՅՏՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Յառաջիկայ 1956ին, Հ. Բ. Ը. Միուրեան լիսնամեակի տօնախմբութեան համար կեդր. Վարչութեան Յանձնախումբը նախապատճառավորիւններ կը կատարէ, որոնց մասին հանուրիւնը տահագրզող տեղեկութիւններ ատենին պիտի հազորդուին մամուլով:

Այսօր կը փափաքինք յայտարաել ըէ, իր բարեսիրական ընդարձակ ձեռնարկներուն նետ, առաւելապես ազգային կրութեան ու մակոյքի նամբով զաղութանայութեան նոզեկան ինքնուրիւնն ու միուրիւնը անաղաց ու ամուր պահելով որբազն զործին նուիրուած այս կազմակերպութիւնը՝ վայել եւ պատշաճ կը նկատ հայ մժին վկայութիւնը ու նենալ մեր կեանին մէջ Հ. Բ. Ը. Միուրեան սահմանուած կոչումին ու կատարած դերին մասին, անոր Ցոքելեանին առիրով:

Ուստի Կեդր. Վարչութիւնը մցում մը կը բանայ հետեւեալ նիւրեռուն համար, ու բայց ներենչուած պէտք է ըլլան Հ. Բ. Ը. Միուրեան լիսուն տարուան կեանին, անոր տեսլան վերելքէն ու ընդհանուր իրազործուներէն, եւ, վաւերական տալանդի մը կնիբով, ակնեւել զեղարուեանական արժեք պէտք է ներկայացնեն.

1. — ՔԵՐԹՈՒԱԾ ՄԸ, գրող բանասեղծին լայն տեսիլիքին համապատասխան երկարութեամբ:
2. — ԹԱՏԵՐԱԽԱԾ ՄԸ, երեք արարով կամ մեկ ժամ տեսողութեամբ:
3. — ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՏՈՐ ՄԸ, ուղարկած կամ Մազքերգ (Hymn), բառերով միասին:
4. — ԽՈՐՃՐԴԱՆԿԱՐ ՄԸ, յարմար ծաւալով եւ իւղաներկ:

Վերեւի զործերը պիտի ենթակուին իւրաքանչիւր նիւրի յատուկ մասնագետներէ կազմուած յանձնախումբերու լինութեան, եւ այդ յանձնախումբերու որումանց համաձայն ամէն մեկ նիւրի համար պիտի տրուին հետեւեալ մցցանակները.


Առաջին մցցանակ	500 տոլար
Երկրորդ մցցանակ	300 տոլար

Հ. Բ. Ը. Միուրեան բոլոր ուղանակներու ժողովականները եւ պատօնեանները չեն կրնար այս մցցումներուն մասնակցիլ:

Վերեւի զործերը պէտք է Կեդր. Վարչութեան դրկուին մինչեւ 1956 Փետրուարի վերջը:

ԴԻՒԱՆ ԿԵԴՐ. Վ. Ա. Բ. ԺՈՂՈՎՐԴԻ

ՄՈՏ ՕՐԵՆ ԼՈՅԱ ԿՐ ՑԵՍՆԵՆ



ԺԱՄԱԳԻՐ ԶԵՌԱՑ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ա. ԵԿԵՂԵՑԻՈՑ

ԱՐՄԵՆԻ ՍՐՈՑ ԹԱՐՄԱՆՑԱՑ ՄԵՐՈՑ

ՍԱՀԱԿԱՅ ԵՒ ՄԵՍՐՈՊԱՅ

ԵՒ ԵՐԱՆԵԼԻ ՀԱՅՐԱՊԵՏԱՑ ՄԵՐՈՑ

ԳԻՒՏՈՑ ԵՒ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՑ

ԵՒ ՄԻՋՈՑ ՆԵՐՈՒՄ ՇՆՈՐՀԱԼԻՈՑՆ



Ը. ՑՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ

ՄԱՅՐ ՅՈՒՅԱԿ ԶԵՌԱԳՐՈՎ
ՄՐՅՈՑ ՏԱԿՈՐԵՑՈՎ

ՀՈՐԻՌԴ ՀԱՏՈՐ

ԿԱԶՄԵՑ

ՆՈՐԱՅՐ ԵՊՍ. ՊՈՂԱՐԵԱՆ

ՄԻԶՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐ

ԳՐԵՑ

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ